



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՆՈՐ ՈՒԻՏԻ ԿՏԱԿԱՐԱՆԸ

ՄԾԶԻՆ ԸՆԹԱՅՔ

ԿՐՕՆԻ ՈՒՍՄԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ

ԵՒ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒ

ԱՆՍՏԵՐԻՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ

ԳՐԵՑ

Վ.ԱՐԳՄԱՆ ԳԱՀ. ԱՐԱԼԱՆՆԱՆ



معارف نظارت جلیه سنک و مطبوعات اداره علیه سنک  
۲۸ تیسان ۳۱۸ تاریخلو و ۱۴۹ نومبر اول  
طبع اولنشد

28(075)

W-93

Կ. ՊՈԼԻՏ

Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԳԻ

1905



1 OCT 2009

314

39

314

39

28(075)

u-93


u r u u u r u u r u

u r u r u r u r u r

u r u r u r u r u r

29/11







3 (075) 4-93 W

52 րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

# ՆՈՐ ՈՒԽՏԻ

## ԿՏԱԿԱՐԱՆԸ

ՄԻՋԻՆ ԸՆԹԱՅԶ

ԿՐՕՆԻ ՈՒՍՄԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ

ԵՒ

ՀԱՅ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒ

ԱՆՍԵՐԻԻՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ

3139

ԳՐԵՑ

ՎԱՐՎԱՆ ԴԱ.Ճ. ԱՐԱՂԱՆՆԵԱՆ



معارف نظارت جلیله سنک و مطبوعات اداره عالیه سنک  
۱۸ نینسان ۳۱۸ تاریخلو و ۱۴۹ نومرولی رخصتنامه سیله  
طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐ. — Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

1905

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻՔԻ

ՆԱԽԱՄԵՇԱՐ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ



Ի ՊԱՏՐԻԱՐԻՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՊԱՏՐԻԱՐԻՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. Տ

Ա. ԲԻԱ. Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՕՐՄԱՆԵԱՆ

ՄԱՅՈՒՆ  
ՀԱՄԱՐ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



1. Քրիստոնէական թուականին սկիզբը, Խորաէլի երկիրը աշխարհագրապէս կը բաժնուէր չորս մասի:

Ա. Հրէաստան (Յուդայի երկիր), Բ. Գալիլիա, Գ. Սամարիա և Դ. Պէրէա:

2. Այդ չորս մասերուն կ'իշխէր Եդովմայեցի իշխան Հերովդէսը, որ հրէական կրօնը ընդունած էր եւ քառստոն տարիէ ի վեր Հռովմի գերիշխանութեան ներքեւ կը թագաւորէր:

3. Հերովդէս՝ Երուսաղէմի տաճարը վերանորոգելու համար ի սրայէլի ժողովուրդին համակրանքին արժանանալ:

4. Մնունըներու գրքին մարգարէացած ժամը հասեր էր. «Զպիտի պակսի Յուդայի երանքէն ելլող իշխողներու սերունդը, յինչեւ որ գայ Սելովը, որ է հեթանոսներուն յոյսն ու ակնկալութիւնը». (Տես Մնն, ԽԹ. Գլ. Ի 10 համար Յակոբ նահապետի օրհնութիւնը): Իսրայէլի ազգը, ուրեմն, իսպառ հակակիր Հերովդէսին, անձկութեամբ կ'սպասէր Մեսիային գալուն, մոռնալով թէ մարգարէներուն զուշակած Մեսիային



Թագաւորութիւնը բոլորովին հոգեւորական բնութիւն պիտի ունենար :

Ծ. Իսրայէլի ազգէն գաղթական հատուածներ ցրուած էին արեւելքի եւ արեւմուտքի բոլոր վաճառաշահ քաղաքները եւ հիմնած էին ժողովարաններ , ուր հաւաքուելով՝ Հրեայները կը կարգային Հին կըտակարան եւ կ'ազօթէին, որպէս զի շուտով զար Մեսիական Թագաւորութիւնը :

Թ. Նոյն իսկ հեթանոս ազգերու մէջ տարածուած էր այս համոզումը, ինչպէս կը պատմէ մեղի Սուէտոն Հռոմայեցի հեթանոս պատմիչը. « Հին ու հաստատուած կարծիք մը կը տիրէր բոլոր արեւելքի մէջ թէ Բախաք որոշած էին հանել զոմն Հրէաստանէ, որ պիտի առնէր տիեզերական Թագաւորութիւն » :

Յ. Անշուշտ՝ նախ Հրեայ գաղթականներու շրջան եւ երկրորդ Հին կտակարանին յունարէն թարգմանութեան առիթով Մեսիային գաղափարը մուտ գտած էր հեթանոսներուն մէջ :



### Գ Լ Ո Ւ Խ Ա.

#### Յովնաննէս Մկրտիչի ծնունդին աւետիար

1. Այդ օրերը նշանաւոր քահանայ մը կար Պաղեստին, Չաքարիա անունով, որ Դաւիթ Թագաւորին հաստատած քահանայական քսանը չորս դասակարգերու ութերորդին կը պատկանէր :

Չ. Չաքարիայի կիներ՝ Եղիսաբէթ կը կոչուէր, որ էրկանը պէս բարեպաշտ ու առաքինի էր :

Եղիսաբէթ ամուլ էր, ուստի եւ իրենց ամուսնութենէն զաւակ չէր ծնած :

Չաքարիա ու Եղիսաբէթ ծերացեր էին :

Յ. Աստուծոյ տաճարին մէջ խնկարկութիւնը կարգով կը կատարէին քահանաները, ուստի եւ երբ կարգը Չաքարիային եկաւ՝ անիկա Սրբարանը մտաւ, մինչդեռ ժողովուրդը դուրսի գաւթը աղօթքի կեցած էր :

4. Չաքարիա տեսաւ սեղանին աջ կողմը կայնած Գարրիէլ հրեշտակը եւ վախցաւ : Հրեշտակը ըսաւ անոր. « Մի՛ վախնար, աղօթքդ ընդունելի եղաւ Աստուծոյ եւ անիկա Եղիսաբէթ կնիկէդ քեզի զաւակ մը պիտի պարգևէ, որուն անունը Յովհաննէս պիտի դնես : Այս տղան Աստուծոյ առջեւը մեծ մէկը պիտի ըլլայ, մօրն արգանդէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի, Տէր Աստուծոյ առջեւէն պիտի գայ Եղիային հոգիովը, որպէս զի Տիրոջը բարեկարգ ժողովուրդ մը պատրաստէ :

Ծ. Չաքարիա առարկեց թէ՛ « ես ծեր եմ ». ան ատենը հրեշտակն ըսաւ. « Դուն մինչեւ մանուկիդ ծնելիք օրը համր պիտի մնաս, թերեհաւատ գըտնուելուդ համար :

Թ. Համրացած Չաքարիա իջաւ սրբատունէն եւ նշանացի կը խօսէր, եւ իր պաշտօնի օրերը լրանալէն ետքը տուն դարձաւ :

Եղիսաբէթ յղացաւ եւ կ'օրհնէր զԱստուած որ իրեն ողորմէր էր :

(Ամբութիւնը մեծ նախատինք էր Իսրայէլի մէջ) :



### Գ Լ Ո Ւ Խ Բ .

#### Յիսուսի ծնունդին աւետարար

1. Յովհաննէսի յղութեան վեցերորդ ախուռն . Աստուած շրկեց Գարրիէլ հրեշտակը Գալիլիայի Նազարէթ քաղաքը, Մարիամ անունով խոնարհ աղջկան մը, որ նշանուած էր հիւսնութեան պարագոյղ Յովսէփ անուն բարեպաշտ անձին .
2. Թէ՛ Յովսէփ և թէ՛ Մարիամ՝ Յուդայի ցեղէն էին, այսինքն ճիշտ կը սերէին Դաւիթ թագաւորէն :



3. Գարրիէլ հրեշտակը ողջունեց Մարիամ կոյսը՝ ըսելով . « Ուրախ եղի՛ր, ո՛վ բերկրեալ կոյս, Տէրը քեզի հետ է : Դուն օրհնուած ես կնիքներուն մէջը » :
4. Մարիամ կոյս շփոթեցաւ և կը մտածէր թէ

էջ պիտի ըլլար այս բարեւը : Ան ատենը հրեշտակը ըսաւ . « Մի՛ վախեր, Մարիամ, վասն զի Աստուծմէ նորհք գտար, պիտի յղանաս, զաւակ մը պիտի ծնիս . րուն անունը Յիսուս պիտի դնես : Անկիւս մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալ Աստուծոյ որդին պիտի կոչուի : Տէր Աստուած անոր պիտի տայ անոր հօրը՝ Դաւիթին աթոռը ու Յակոբին սերունդին (բոլոր հաւատացեալներու) վրայ ՅԱՒԻՏԵԱՆ պիտի թագաւորէ » :

5. Մարիամ ըսաւ . « Ի՞նչպէս կրնայ ըլլալ այս բանը, քանի որ ես ամուսնացած չեմ » : Հրեշտակն ըսաւ . « Հոգին սուրբ պիտի գայ քեզի ու Բարձրեալ Աստուծոյ զօրութիւնը քու վրայէ հովանի պիտի ըլլայ, քանզի քեզմէ ծնելիքը Սուրբ է և Աստուծոյ Որդի պիտի կոչուի : Գիտցիր որ Աստուծոյ քով անկարելի բան չկայ, անաւասիկ եղիսաբէթ ազգականդ ալ որ ամուլ էր, յղի է վեց ամսէ ի վեր :

6. Մարիամ ըսաւ . « Ահա ես Տիրոջը աղախինն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինձի » : Հրեշտակը դնաց անոր քովէն :

### Գ Լ Ո Ւ Խ Գ .

#### Յովհաննէս Մկրտիչին ծնունդը

1. Մարիամ այն օրերը ելաւ Նազարէթէն եւ Հրէաստանի լեռնակողմը գնաց՝ այն քաղաքը, ուր էր Զաքարիայի տունը . ներս մտաւ տունէն եւ եղիսաբէթը բարեւեց :



Չ. Երբ Եղիսաբէթ լսեց Մարիամ կոյսին բարեւ՝ իր արգանդին մէջի զաւակը խաղաց եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով լեցուած՝ բարձր ձայնով ըսաւ Մարիամին. « Օրհնեա՛լ ես դուն կնիկներուն մէջը և օրհնեա՛լ է քու արգանդիդ զաւակը և աս ինձի ի՛նչ մեծ երջանկութիւն, որ իմ Տիրոջս մայրը ինձի տես կուգայ, քանզի բարեւիդ ձայնը լսածիս պէս՝ զաւակս արգանդիս մէջ ուրախութենէն խաղաց. երնէ՛կ անոր, որ Տիրոջը իրեն ըսածին հաւտացեր է »:

Յ. Մարիամ ըսաւ ան ատենը. « Տէրը պիտի մեծացնէ անձս եւ հոգիս պիտի ուրախանայ Փրկիչ Աստուծոյս, վասն զի անիկա իր աղախինին խոնարհութեանը նայեցաւ եւ անա ասկից ետքը բոլոր ազգերը ինձի երանութիւն պիտի կարդան, վասն զի Աստուած ինձի մեծ բաներ բրաւ և Անոր անունը սուրբ է: Աստուծոյ ողորմութիւնը իրմէն վախցողներուն վրայ է ազգէ ազգ, Զօրաւորները իրենց աթոռներէն իջեցուց և խոնարհները բարձրացուց »:

« Անիկա օգնեց իր Իսրայել ժողովուրդին՝ իր ողորմութիւնը յիշելով ինչպէս որ խոստացած էր մեր նախնիքներուն՝ Աբրահամին ու անոր սերունդին յաւիտեան »:

(Հայոց Սուրբ Եկեղեցին ամէն առտու կը կարդայ կոյս Մարիամի այս փառաբանական երգը, ատով կը կատարուի Աւետարանին խօսքը թէ բոլոր ազգեր երանութիւն պիտի տան կոյս Մարիամին):

4. Երեք ամիսներ վերջը Եղիսաբէթ ծնաւ զաւակը. ութ օր ետքը օրէնքին համաձայն թլփատելու ելան մանուկը: Անունը ի՞նչ շնելու է կ'ըսէին, ազգականները. Եղիսաբէթ ըսաւ, Յովհաննէս պիտի դըր-

ուի: Զաքարիա ալ տախտակի վրայ նոյնը գրեց. ատոր վրայ զարմացան հաւաքուողները:

Ծ. Զաքարիայի լեզուն բացուեցաւ և կ'օրհնէր զԱստուած: Ներկաները կ'ըսէին, « Արդեօք աս տղան ի՛նչպիսի մէկը պիտի ըլայ »: Զաքարիա սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ ու ըսաւ. « Օրհնեա՛լ ըլլայ Իսրայէլին Աստուածը, որ այցելութեան ելաւ ու իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ. մեզի փրկութեան եղջիւր մը պիտէ հանէ իր Դաւիթ ծառային սերունդէն. եւ Դուն, ո՛վ մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, ինչու որ Տիրոջը երեսին առջեւէն պիտի երթաս անոր ճամբաները պատրաստելու, Անոր ժողովուրդին գիտցնելու իրենց իսկութիւնը՝ մեղքերու թողութիւնովը »:

Թ. Մանուկը կ'աճէր եւ կը զօրանար հոգիով, անապատներու մէջ կ'ապրէր մինչեւ ասի օրը երբ իսրայէլի ժողովուրդին երեւցաւ:

Պ. Իսկ Մարիամ Յովհաննէսի ծնունդէն վերջը զարձաւ Նաղարէթ իր տունը:

(Հայոց Սուրբ Եկեղեցին կը տօնէ Ս. Յովհաննէսի ծնունդը և այդ առթիւ կ'երգէ « Արեգակն արդարութեան » գեղեցիկ շարականը):





# Գ Լ ՈՒ Խ Դ .

## Յիսուսի ծնունդը

1. Յովսէփ տեսաւ Մարիամին յղի վեճակը և ուրովհետև տեղեակ չէր այդ յղութեան Աստուծոյ կողմէ ըլլալուն՝ մտադրեց թող տալ իր այդ նշանածը և որովհետև արդար՝ զթած մարդ էր, չուզեց իր արձակումը հրապարակաւ ընել :

2. Յովսէփ այս խորհուրդին մէջ կը տարուբերէր, երբ Տիրոջ հրեշտակը երազին մէջ երևցաւ անոր ու ըսաւ . « Յովսէփ, Դաւիթի՛ն զաւակը, մի՛ վախնար մօտդ աննել Մարիամ կինդ, վասն զի անոր արգանդին յղացածը Սուրբ Հոգիէն է . որդի մը պիտի ծնի և անոր անունը Յիսուս (Փրկիչ) զնես . վասն զի Անիկա իր ժողովուրդը պիտի ազատէ մեղքերէն : »

3. Յովսէփ քունէն արթննալով՝ հրեշտակին հրամանին համաձայն Մարիամը իր քովը առաւ եւ զայն կը խնամէր :

4. Նոյն ժամանակ, Հոովմի կայսրը՝ Օգոստոս՝ հրաման ըրած էր որ մարդահամար կատարուի՝ իր տէրութեան թէ՛ ուղղակի եւ թէ՛ անուղղակի հպատակ ելող երկիրներու մէջ :

5. Իսրայէլի երկիրն ալ պիտի գործադրէր այդ հրամանը, մինակ սա յաւելուածով որ ամէն մարդ իր ծնած քաղաքը պիտի երթար արձանագրուելու :

6. Յովսէփ որ Բեթղէհէմցի էր, առաւ Մարիամ կոյսը իրեն հետ և՛ անցնելով Սամարիայէն՝ հասաւ Հրէաստանի Բեթղէհէմ քաղաքը, որ Դաւիթ մարգա-

լէին ալ ծննդավայրն էր, հոն իր նշանածին հետ մէկտեղ արձանագրուելու՝ կայսեր հրամանին համաձայն :

7. Շտաեր ալ Յովսէփին պէս եկած էին Բեթղէհէմ, ուստի եւ քաղաքին մէջ յարմար տեղ մը չի կրցան գտնել օթեւանելու, և անասուններու գոմ եղող այրի մը մէջ իջան : Հոն, այդ գիշերը Մարիամի յղութեան օրերը լինցած ըլլալուն, ծնաւ իր մի-



ածին որդին, խանձարուրով փաթթեց եւ մսուրին մէջ պակեցուց զայն :

8. Բեթղէհէմի մօտերը հովիւներ կային, որոնք իրենց հօտը կը պահպանէին բացը. ահա գիշերին մէջ տեսան հովիւները՝ որ Աստուծոյ հրեշտակը իջաւ իրենց վրայ և Տիրոջը փառքը անոնց բոլորտիքը ցաթեց եւ խիստ վախցան :

9. Հրեշտակն ըսաւ հովիւներուն . « Մի՛ վախ-



նաք, վասն զի ձեզի մեծ ուրախութիւն մը կ'աւետեմ, որ բոլոր ժողովուրդին պիտի բլլայ. ձեզի այսօր ծնաւ Փրկիչ մը, որ ինքը Մեսիան է (օծեալ), այս ալ ձեզի նշան բլլայ. պիտի գտնէք մանուկ մը խանձարուրով պատած ու մտուրին մէջ դրուած » :

**10.** Յանկարծ այդ հրեշտակին հետ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը տեսան, որոնք կ'օրհնէին զԱստուած ու կ'ըսէին. « Փա՛ռք երկինքի բարձրութեանը մէջ ու երկրիս վրայ խաղաղութիւն, մարդոց հաճութիւն և օրհնութիւն » :

(Հայոց Սուրբ Եկեղեցին ամէն առաւօտ կ'երգէ հրեշտակներուն այս երգը « Փառք ի բարձունս » :

**11.** Երբ հրեշտակները երկինքը վերացան՝ հովիւները ըսին, « Եկէ՛ք, երթա՛նք, մինչեւ Բեթղէհէմ, տեսնե՛նք թէ ի՛նչ էր որ մեզի ցոյց տուաւ Աստուած » :

**12.** Եկան արտորնօք, գտան Մարիամն ու Յովսէփը ու մտուրին մէջ պառկած Մանուկը և անոնց իմացուցին ինչ որ հրեշտակները այդ Մանուկին համար իրենց խօսած էր :

Հոգները կը զարմանային հովիւներուն խօսքին, բայց Մարիամ իր միտքը կը պահէր այդ խօսքերը եւ կը խորհրդածէր անոնց վրայ :

**13.** Հովիւները ետ դարձան, կ'օրհնէին զԱստուած իրենց լսած ու տեսած սխրալի բաներուն համար :

(Հայոց Սուրբ Եկեղեցին Յունվար 6ին կը տօնէ մեծ հանդէսով Յիսուսի ծնունդը. նշանաւոր է այդ առիթով երգուած շարձանը. « Խորհուրդ մեծ և սքանչելի » )



# Գ Լ Ո Ւ Խ Ե .

## Յիսուսի անաւ բերուիլը

**1.** Օրէնքին պահանջման համաձայն, Յովսէփը ու Մարիամ ութերորդ օրը թլվատեցին մանուկը և անունը դրին Յիսուս, հրեշտակին հրահանգին համաձայն :

**2.** Երբ Յիսուս քառասուն օրսւան եղաւ՝ ան անունը տարին զանիկայ Երուսաղէմ, Աստուծոյ տաճարը եւ օրէնքին համեմատ, զոյգ մը տատարակնութեցին, քանզի աղքատ էին և չէին կրնար արժէքաւոր զո՛ւ մը նուիրել :



**3.** — Երուսաղէմի մէջ կ'ապրէր Սիմէօն անուով՝ աստուածավախ աչեւոր մը, որ Ս. Հոգիէն հրահան ատած էր թէ մահ չպիտի տեսնէր մինչեւ որ Մեսիան տեսնելու արժանի չըլլար : Նոյն ժաման տատարն եկաւ, Յիսուս մանուկը դիրկն առաւ, օրհնեց



զԱստուած ու ըսաւ . « Ա՛լ հիմակ , ո՛վ Տէր , արձակէ ծառադ խաղաղութիւնով , քանզի աչքերս տեսան վըրկութիւնդ , զոր բոլոր ժողովուրդներուն պատրաստեցիր , լոյս մը՝ հեթանոսները լուսաւորելու եւ փառք իսրայէլ ժողովուրդի » :

4 . Յովսէփ ու Մարիամ զարմացած էին մանուկին վրայով խօսուածներուն : Միմէօն զանոնք ասորհնեց ու դառնալով Մարիամին՝ ըսաւ . « Աս մանուկը իսրայէլի մէջ շառերուն իյնալուն ու ելլելուն պատճառ պիտի ըլլայ ու քու անձէդ ալ սուր պիտի անցնի » :

5 . Հոն կար նաեւ նշանաւոր կին մը Աննա անունով , որ Տ՛ի տարեկան պառաւ մըն էր և գիշեր ոցորեկ ծոմով ու աղօթքով Աստուծոյ կը ծառայէր . ալ նոյն ժամուն եկաւ ու Աստուծոյ գոհութիւն կու տար և մանուկին վրայով կը խօսէր ամէն անոնց , ու Երուսաղէմի փրկութեանը կ'սպասէին :

6 . Դարձան անոնք Բեթղէհէմ :

( Հայոց Ս . Եկեղեցին ամէն տարի Յիսուոի տաճարնձայուիլը կը տօնէ փետրվար 14ին , ճիշտ քառասուոր վերջը՝ յունուօր Են հաշուելով . այդ առթի կ'երգուի « Մարմնացեալդ ի կուսէն » շարականը և « Քրիստոս փառաց թագաւոր » տաղը ) :



## Գ Լ Ո Ւ Խ Զ .

### Մոգերուն երկրպագութիւնը

1 . Ենյն միջոցներուն , արեւելքի երկիրներէն մոգեր եկան Երուսաղէմ ու ըսին . « Ո՛ւր է այն տեղը ուր հրէաներուն թագաւորը ծնաւ . վասն զի մենք արեւելքի մէջ անոր աստղը տեսանք ու եկանք անոր երկրպագութիւն ընելու » :

2 . Հերովդէս՝ լսելով այս խօսքը՝ տակնուվրայ եղաւ ու բոլոր Երուսաղէմի ժողովուրդն ալ իրեն հետ ուզուեցաւ :

Հերովդէս՝ կանչելով Հրէաներու քահանայապետն ու ղպիրները՝ յարցուց անոնց թէ Մեսիան ո՛ւր պիտի նի :

3 . Անոնք ալ ըսին . « Հրէաստանի Բեթղէհէմ քաղաքը պիտի ծնի , ինչպէս Միքիա Իարզարէն դարեր առաջ գուշակած է » :

4 . Անտեսնը Հերովդէս դադտուկ կանչեց մոգերը և անոնցմէ ստուգեց աստղին երեւցած ժամանակը և Բեթղէհէմ ճամբելով զանոնք՝ ըսաւ . « Գացէ՛ք՝ այդ մանուկին վրայով ստուգեցէ՛ք ու երբ որ գտնէ՛ք , ինձի ալ իմացուցէ՛ք , որպէս զի ես ալ գամ երկրպագութիւն ընելու » :

5 . Մոգերը ճամբայ եկան , և ահա աստղը՝ զոր տեսեր էին արեւելքի մէջ՝ նորէն երեւցաւ անոնց եւ առաջնորդեց անոնց մինչեւ մանուկին կեցած տեղին վրայ , ուր մտնելով մոգերը՝ տեսան մանուկը իր մօրը



հետ ու ինկան երկրպագութիւն ըրին մանուկին եւ իրենց գանձերը բանալով՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս ընծայեցին անոր :

Ե. Երազի մէջ հրաման ատին անոնք չերթալ Հերովդէսի քով, ուստի տարբեր ճամբով իրենց երկիրը վերադարձան :

Այսպէս կը կատարուէր Սաղմոսին հազար տարի առաջ գուշակածը թէ « Անոր պիտի երկրպագեն աշխարհի թագաւորները, եւ Արարիոյ ու Սարայի թագաւորները ընծաներ պիտի բերեն անոր » :


Դ. Մոգերուն երթալէն ետքը Աստուծոյ հրեշտակը երեցաւ Յովսէփին ու ըսաւ . « Ելի՛ր, ա՛ռ այդ մանուկը և անոր մայրը, ու փախիր Եգիպտոս և հոն կեցիր մինչեւ որ ես իմացնեմ, վասն զի Հերովդէս կը մտածէ սպաննել մանուկը » :

Տ. Յովսէփ՝ հրեշտակին պատուէրին համաձայն ելաւ ու մանուկն ու մայրը փախցուց Եգիպտոս :

Թ. Հերովդէս, ժամանակ մը սպասելէ ետքը երբ ըմբռնեց թէ խարուած է մոգերէն, սաստիկ բարկացաւ ու Բեթղէհէմի եւ անոր շրջակաները գտնուած բոլոր երկու տարեկանէն վար եղող տղաքը սպաննել տուաւ :

Ատով կը հաշուէր անիկայ թէ անշուշտ Մեսիան ալ սպաննուած մանուկներուն մէջը կ'ըլլար :

(Հայոց Սուրբ Եկեղեցին կը տօնէ Բեթղէհէմի մանուկներու տօնը) :



### Գ Լ Ո Ւ Խ Է .

## Եգիպտոսէ վերադարձը եւ Նազարէթի մէջ հաստատուիլը

1. Հերովդէս մեռաւ, իրեն յաջորդեցին երեք զաւակները որոնք Պաղեստինի իշխանութիւնը բաժնեցին իրենց մէջ, Հոովմի պետութեան հաճութեամբը, և կոչուեցան Չորրորդապետներ :

2. Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Յովսէփին Եգիպտոսի մէջ և ըսաւ . « Ելի՛ր, ա՛ռ մանուկն ու իր մայրը եւ վերադարձի՛ր Իսրայէլի երկիրը, վասն զի մանուկին թշնամիները մեռան » :

3. Յովսէփ ելաւ ու դարձաւ Հրէաստան, բայց երբ տեսաւ որ Հերովդէսի անգութ որդին՝ Արքեղայոս հոն թագաւորած է, վարանեցաւ բնակիլ հոն ու պատգամ առնելով հրեշտակէն՝ վերադարձաւ Նազարէթ քաղաքը, որ Գալիլիայի մէջ էր եւ ուր կ'իշխէր Հերովդէսի մէկ ուրիշ որդին, որ մեղմ էր բնաւորութեամբ :

4. Նազարէթի մէջ բնակելուն համար էր, որ Յիսուս « Նազովրեցի » կոչուեցաւ :

5. Յիսուս մանուկը կը մեծնար ու հօգիով կը գօրանար՝ իմաստութեամբ լեցուած և Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր :





### Գ Լ ՈՒ Խ Ը .

#### Յիսուսի պատանեկութիւնը

**1.** Յովսէփ ու Մարիամ ամէն տարի Պասէքի տօնին Երուսաղէմ կ'երթային, ինչպէս կը պահանջէր օրէնքը :



Երբ Յիսուս 12 տարեկան եղաւ, առաջին անգամ զայն ալ հետերնին աօին եւ Երուսաղէմ տարին :

**2.** Տօնին օրերը լրանալուն՝ զարձան անոնք,

Յիսուս մանուկը հետերնին չէր, կարծեցին թէ միւս ճամբորդներուն հետ առաջ անցած է, օրուան մը ճամբայ գացին և զանիկա փնտռեցին իրենց զրացիներուն և ծանօթներսն մէջ ու չգտան :

**3.** Ետ դարձան Երուսաղէմ զանիկա փնտռելու համար և երրորդ օրը գտան աաճարին մէջ, ուր նըստած էր վարդապետներուն մէջ և մտիկ կ'ընէր անոնց խօսքերը ու հարցումներ կ'ուղղէր անոնց : Մտիկ ընողները կը զարմանային անոր իմաստութեանը եւ պատասխաններուն վրայ :

**4.** Երբ զանիկայ տեսան հոն այդ վիճակին մէջ, զարմացան. մայրը ըսաւ անոր. « Աս ի՞նչ բան է որ դուն մեզի բրիր. ահաւասիկ մենք տառապեցանք ու շատ փնտռեցինք քեզ » :

**5.** Յիսուս ըսաւ. « Զիս ինչո՞ւ կը փնտռէիք. չէի՞ք գիտեր թէ Հօրս տունը պէտք է գտնուիմ ես » :



**6.** Անոնց հետ ելաւ անիկա ու Նազարէթ դար-



ճաւ ու անոնց հնազանդ էր. իսկ մայրը այս դէպքն ալ միտքը կը պահէր ու կը խորհրդածէր :

Պ. Յիսուս կը զարգանար իմաստութիւնով եւ հասակով և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք կը գլուխէր :



### Գ Լ Ո Ւ Խ Թ .

#### Յովհաննէս Մկրտիչի հրապարակային կեանքը

1. Անցեր էին երեսուն տարիներ՝ Յովհաննէսի ծնունդէն ի վեր՝ երբ անիկայ անապատներէն իջաւ Հրէաստան և սկսաւ քարոզել ժողովուրդին :

2. Իր քարոզներուն հիմն էր ասլախարութիւնը կը ըսէր անիկա. « Ապախարեցէ՛ք, վասն զի երկինք թագաւորութիւնը մօտեցած է » :

3. Յովհաննէս հազեր էր ուղտի մաղէ զգեցումն մը, մէջքը կաշիէ գօտի մը կապած էր եւ անապատ կեանքին մէջ խտամբերութեան վարժուած՝ միայ վայրի մեղր ու մարախ կ'ուտէր :

4. Ժողովուրդը այս զարմանալի անապատակաւնին քով սկսաւ երթալ, մտիկ ընելու նորօրինակ քարոզները : Յովհաննէս կը պահանջէր, որ մկրտուողները եկողները՝ նախապէս խոստովանելով իրենց մեղքերը :

5. Բոլոր եկողները Յորդանան գետին մէջ կ'

մկրտէր, ատոր համար Յովհաննէսին տիտղոսը դըր- ուեցաւ Մկրտիչ :

6. Իսրայէլի ժողովուրդին մէջ կային գիտնա- կաններու քանի մը կուսակցութիւններ, որոնց գլու- խաւորներն էին Սադուկեցիներուն և Փարիսեցիներուն խումբերը :

7. Սադուկեցիները՝ ազգային ծէսերու հակա- ոակ էին, չէին հաւատար մեռելոց յարութեան, հո- գիի անմահութեան : Սուրբ Գիրքէն մինակ Մովսէսի հինգ գիրքերը կը ճանչնային : Ճշմարտութենէ հեռու կ'ապրէին՝ մէկ խօսքով :

8. Փարիսեցիները՝ Սուրբ Գիրքով սահմանուած ծէսերէ զատ՝ աւելորդ շատ մը լուացումներ և արա- ղողութիւններ հնարեր էին. եւ որչափ որ Ս. Գրքին յարկ կանոնական գիրքերը կ'ընդունէին, օրէնքին իմաստը չէին գործադրեր : Իրենք զիրենք նախան- ճախնդիր (փարիսեցի) կը կոչէին, բայց դրսանց էր իրենց բարեպաշտութիւնը. կեղծաւորներ էին ընդ- թէ հանրապէս :

Սադուկեցիներուն կէտ առ կէտ կը հակառակէին մէջ :

9. Սադուկեցիներն ու փարիսեցիներն ալ վագե- ցին գացին Յովհաննէսին քարոզութիւնը մտիկ ընե- ու և մկրտուելու անկէ : Յովհաննէս ըսաւ անոնց. « Օձի ձագեր, ո՞վ իմացուց ձեզի զալիք պատիժէն խուսափիլ, ապախարեցէ՛ք դուք ալ, չըլլայ թէ խորհիք ու ըսէք ձեր մտքին մէջ թէ մենք հայր Աբ- ռահամէն սերած ենք. վասն զի Աստուած կարող է սու քարերէն Արրահամի որդիներ յարուցանել » :



կ'ըսէր Նաև. « Ան ամէն ծառ, որ բարի պտուղ չի բերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի » :

**10.** Յովհաննէս կ'ըսէր հասարակ ժողովուրդին. « Ո՛վ որ երկու հանդերձ ունի, մէկը չունեցողին թող տայ, ո՛վ որ կերակուր ունի՝ այնպէս թող ընէ » :

**11.** Մաքսաւորներուն կ'ըսէր. « Ձեզի հրամայուածէն աւելի մաքս չպահանջէք » : Չինուորներուն ալ կ'ըսէր. « Չ'ըլլայ որ մէկը հարստահարէք, մի՛ զրպարտէք ուրիշը, հապա գոհացէք ձեր թոշակովը » :

**12.** Ժողովուրդին մէջ գաղափար մը երեւան եկաւ թէ արդեօք ա՞ն է Մեսիան. Յովհաննէս իմացաւ զայդ եւ դառնալով ժողովուրդին ըսաւ. « Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար. կայ ձեզ մէջը մէկը, որ իմ ետեւէս կուգայ որ ինձմէ շա՛տ բարձր է, այնպէս որ ես անոր կօշիկներուն կապերը քակելու արժանի չ'եմ : Անիկայ ձեզ պիտի մկրտէ Ս'Հոգիով ու կրակով. հեծանոց մը պիտի ունենայ անիկայ իր ձեռքը որով իր կալը պիտի մաքրէ. ցորենը պիտի հաւքէ ու երգը անմարելի կրակին պիտի տայ :



## Գ Լ ՈՒ Խ Ժ .

### Յիսուսի մկրտուիլը Յովհաննէսէն

**1.** Այն ատեն Յիսուս Գալիլիայի Նազարէթ քաղաքէն եկաւ Յորդանան գետի եզերքը Յովհաննէսին քով, որպէս զի անկէ մկրտուի :

**2.** Յովհաննէս երբ տեսաւ Յիսուսը՝ արզիլեց զանիկա ու ըսաւ. « Պէտք է որ ես քենէ մկրտուիմ ու դուն ինձի՛ կուգաս մկրտուելու » :




**3.** Յիսուս պատասխանեց. « Թո՛ղ տուր, վասն զի այնպէս կը վայել ձեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք » : Այս խօսքին վրայ Յովհաննէս համակերպեցաւ և Յիսուսը մկրտեց Յորդանանի մէջ :



4. Յիսուս մկրտուած պահուն կ'աղօթէր Աստուծոյ. եւ ահա Յովհաննէս տեսաւ որ երկինքը բացուեցաւ ու Աստուծոյ Հոգին աղաւնիի կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ ու երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. « Ասիկա է իմ սիրելի որդիս որուն հաւանք եմ », :

5. Յիսուս շուտով դուրս ելաւ ջուրէն առանց խոստովանելու, վասն զի անմեղ էր և կարօտ չէր խոստովանութեան :

(Հայոց Սուրբ Եկեղեցին Յունվար Յին կը տօնէ մեծահանգէս Մենդեան տօնին հետ եւ Յիսուսի մկրտութիւնը Զրօրհնէքի հանգէս ըսելով, իսկ երկու տօներուն միասին անուն կը դնէ Տօն Աստուածայայտնութեան : Զրօրհնէքի տաղն է « Ո՛վ զարմաշալի » :)



## Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

### Յիսուսի հրապարակային պաշտօնի մէջ մտնելը

1. Մկրտուելէ վերջ Յիսուս գնաց անապատը, հոն քառասուն օր քառասուն գիշեր ծոմ կենալէ վերջը սատանայէն փորձուելով յաղթեց անոր և զարծաւ նորէն դէպի Յորդանան :

2. Օր մը ետքը երբ Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ կուգար, ըսաւ. « Ահա Աստուծոյ գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ : Ասիկա է որուն համար ես

կը զրուցէի թէ իմ ետեւէս մարդ մը կուգայ, որ ինձմէ առաջ եղաւ. վասն զի ինձմէ առաջ էր, ես զանիկայ չէի ճանչնար (լիովին). բայց ես ջրով մկրտելու եկայ, որպէս զի անիկայ Իսրայէլին յայտնուի : Զիս զրկող Հոգին ըսաւ ինձի, Որո՛ւ վրայ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի անոր, անիկայ է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ : Ես ալ տեսայ Սուրբ Հոգին որ աղաւնիի կերպարանքով կ'իջնէր երկինքէն ու անոր վրայ կը հանգչէր :

Ես տեսայ ու վկայեցի թէ անիկա է Աստուծոյ որդին » :

3. Յաջորդ օրը Յովհաննէս կայներ էր և քովը ալ երկու աշակերտները. տեսաւ որ Յիսուս կը պտըտէր, ըսաւ. « Ահա Աստուծոյ գառը, » : Երկու աշակերտները լսելով Յովհաննէսին այդ խօսքը՝ Յիսուսին ետեւէն գացին :

Այդ երկուքէն մէկն էր Անդրէաս, իսկ միւսը հաւանակամարար Յովհաննէս Զերեթեան :

4. Այդ երկուքը Յիսուսի քով կեցան գիշերը, միւս օրը Անդրէաս գտաւ իր Սիմոն եղբայրն ու ըսաւ, « Մեսիան գտանք » ու տարաւ զանիկա Յիսուսին քով :

5. Յիսուս Սիմոնի նայելով ըսաւ. « Դո՛ւն ես Յովհաննի որդին Սիմոնը, դուն կեփաս պիտի կոչուիս », որուն յունարէնն է Պետրոս և հայերէնը՝ վէմ :

6. Յաջորդ օրը Յիսուս Գալիլիա երթալ ուզեց և տեսնելով Փիլիպպոսը ըսաւ անոր. « Իմ ետեւէս եկուր » :

Փիլիպպոս հետեւեցաւ Յիսուսին : Փիլիպպոս ալ



Պետրոսին ու Անդրէասին պէս Բէթսայիթա քաղքէն էր :

Յ. Փիլիպպոս գտաւ Նաթանայէլ ըսուած իր բարեկամը ու ըսաւ . « Գալիլիայի Նազարէթէն եղող մէկը գտանք և անիկայ Ան է որուն համար Մովսէս օրէնքին մէջ գրեց ու Մարգարէնները գուշակեցին » :

Տ. Նաթանայէլ ըսաւ . « Դժուար որ Նազարէթէն աղէկ բան զուրս դայ » : Փիլիպպոս ըսաւ , « Եկու՛ր ու տե՛ս » ,

Ծ. Յիսուս տեսնելով Նաթանայէլը ըսաւ . « Ահա իրաւցնէ Իսրայէլացի մը որուն ներսի դին նենգութիւն չկայ » :

Նաթանայէլ ըսաւ . « Դուն զիս ուսկի՞ց կը ճանչնաս » :

Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . « Դեռ Փիլիպպոս քեզ չկանչած՝ թզենիին տակը քեզ տեսայ » :

10. Նաթանայէլ զգաց Յիսուսի ամենագիտութիւնը եւ ըսաւ . « Բարբի՛, զո՛ւն ես Աստուծոյ Որդին , զո՛ւն ես Իսրայէլին թագաւորը » :

11. Յիսուս ըսաւ անոր « Որովհետեւ ըսի թէ թզենիին տակը տեսայ քեզ , կը հաւատա՞ս . ասկէց աւելի մեծ բաներ պիտի տեսնես » :

(Աւանդութիւնը կ'ըսէ թէ Նաթանայն՝ Բարթուղիմէոս առաքեալն էր) :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

### Յիսուսի առաջին հրաւագործութիւնը

1. Նաթանայէլի հետի խօսակցութեան երկրորդ օրը հարսնիք մը կար Գալիլիայի Կանա ըսուած քաղաքին մէջ , Յիսուսի մայրը Մարիամ հարսնետունն էր : Յիսուս եւ իր աշակերտներն ալ հարսնիքը հրաւիրուեցան :

2. Հարսնիքին մէջ գինին պակսեցաւ : Մարիամ ըսաւ Յիսուսին . « Գինին հատեր է , տղա՛ս » : Յիսուս ըսաւ անոր . « Կնի՛կ , ինձի ու քեզի ի՞նչ , դեռ ժամանակս հասած չէ » :

3. Մարիամ ըսաւ սակայն սպասուորներուն . « Ինչ որ ձեզի ըսէ տղաս , ըրէ՛ք » :

4. Հարսնետան մէջ վեց քարէ թակոյկներ կային բաւական խոշոր որոնց մէջ ջուր կը լեցուէր սովորութիւն եղած կարգ մը լուացումներու համար : Յիսուս ըսաւ սպասուորներուն . « Ատ թակոյկները ջուրով լեցուցէ՛ք » . անոնք ալ մինչեւ բճրանը ջուրով լեցուցին : Յիսուս ըսաւ . « Հիմակ ատոնք տարէ՛ք սեղանապետին » . անոնք ալ տարին :

5. Սեղանապետը խմեց ու տեսաւ որ ընտիր գինի մըն է ու չէր գիտեր թէ ուսկի՞ց էր եկած այն , մինչդեռ սպասուորները տեսան ջուրին գինիի դառնալը : Սեղանապետը սրդողած ձեւով մը ըսաւ փեռսային . « Ամէն մարդ աղէկ գինին առաջ կը բերէ ու



երբոր խմողները պինդվան ան ատենը վարնոցը կը քշէ, մինչդեռ դո՛ւն աղէկ գինին մինչեւ հիմակ պահեցիր, աս ի՛նչ բան է » :

6. Ամէնն ալ իմացան Յիսուսի գործած այս առաջին հրաչքը, որով անոր աստուածային փառքն ու կարողութիւնը կը ցուցուէր որով եւ իր աշակերտները հաւատացին իրեն :

Յիսուս այս հրաչքով կը ցուցնէր նաև թէ իր մօրը բարեխօսութիւնը որքա՛ն ընդունելի է իրեն :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յիսուս առաջին անգամ կ'երթայ Երուսաղէմ Պասէփի տօնին

1. Կանայէն մեկնելով՝ Յիսուս իր մօրը և աշակերտներուն հետ իջաւ Գալիլիայի Կափառնաու՛մ քաղաքը եւ հո՛ն կեցաւ քանի մը օրեր :

2. Պասէփի տօնը մօտ էր, ուստի եւ անիկա իր աշակերտներէն մի քանին հետը առնելով Երուսաղէմ գնաց :

3. Երբ տաճարը մտաւ և տեսաւ որ վաճառականները խմբուած էին հո՛ն և արջառ, ոչխար և աղանի կր ծախէին ու սեղանաւորներ, դրամասեղանը առջեւնին, դրամ կը փոխէին՝ սրտմտեցաւ ու չուանէ

խարազան մը շինելով՝ տաճարէն դուրս վաճառեց ամէնն ալ, դրամասեղանները կործանեց ու աղանի ծախողներուն ըսաւ. « Վերուցէ՛ք ատոնք ու իմ հօրս տունը վաճառանոց մի՛ դարձընէք » :

Սաղմոսը ըսեր էր արդէն. « Քու տանդ նախանձը զիս պիտի մաշեցնէ » . այսպէս կը կատարուէր այդ գուշակութիւնը :

4. Հրեաներուն իշխանաւորները ըսին անոր. « Ի՞նչ նշան կրնաս ցոյց տալ մեզի, որ այդպէս կը վարուիս » : Պատասխան տուաւ անոնց ու ըսաւ Յիսուս. « Քակեցէ՛ք դուք այդ տաճարը եւ ես երեք օրէն պիտի վերականգնեմ » :

5. Հրէաները դարձան ու ըսին. « Քառասունը վեց տարուան մէջ հազիւ վերաշինուեցաւ այդ տաճարը ու դուն երեք օրը պիտի կանգնես » :

(Յիսուս այս խօսքով կ'ուզէր իմացնել իշխաններուն թէ դուք պիտի քակէք մարմնոյս շէնքը, զոր ես սակայն երեք օրին մէջ պիտի կանգնեմ յարութեամբ և այս պիտի ըլլայ իմ ձեզի տալիք մեծագոյն նշանս, բայց անոնք չկրցան հասկնալ :)

6. Յիսուսի ցոյց տուած նախանձախնդիր հոգին և իր պատկառելի դիրքը առիթ եղան որ շատեր հաւատացին եւ իրեն հետեւեցան . սակայն Յիսուս քաջ գիտէր որ անոնցմէ մէկ քանիններուն հաւատքը սըրտազին չէր. հասաւ նոր բաներու հետաքրքրութիւն : վասն զի ինքը վկայի պէտք չունէր իմանալու համար թէ ի՛նչ է մարդը . ինքը լաւ կը ճանչնար մարդոց ներքինը :



### ԳԼՈՒԽ ԺԴ.

## Նիկողիմոսի հետ խօսակցութիւն՝ վերսիւն ծնունդի մասին

1. Հրէայ իշխանաւորներէն Նիկողիմոսը, որ փարիսեցի կուսակցութեան կը պատկանէր, լսեց Յիսուսի խօսքերը եւ տեսաւ անոր իշխանաբար վարուիլը տաճարին մէջ, փափաքեցաւ զանիկա տեսնել. ուստի զիջերով եկաւ անոր քով:

2. Յիսուսին ըսաւ Նիկողիմոս. « Ռաբբի, զի տեսնք որ դուն Աստուծոյ կողմէն վարդապետ եկած ես, վասն զի գործած նշաններդ ոչ մէկը կրնայ գործել եթէ Աստուած անոր հետը չըլլայ »:

3. Յիսուս ըսաւ անոր. « Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի թէ որ մարդ մը նորէն չծնի՝ չիկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել »:

4. Նիկողիմոս զարմացաւ ու ըսաւ. « Ինտո՞ր կրնայ ծերացած մարդը նորէն ծնիլ, միթէ հնա՞ր է որ անիկայ մօրը արգանդը մտնէ ու ծնի »:

5. Յիսուս ըսաւ. « Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի. ո՛վ որ չծնի ջրէն ու Հոգիէն չիկրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել: Մարմինէն ծնածը մարմին է, Հոգիէն ծնածը հոգի է. ու դուն մի՛ զարմանար երբ ըսի քեզի թէ պէտք է որ դուք նորէն ծնիք: Ինչպէս որ հովը կը փչէ ո՛ւր որ ուզէ, անանկ ալ ամէն Հոգիէն ծնածը: Դուն կը լսես հովին ձայնը, բայց

չէր գիտնար թէ ուսկի՞ց կուգայ կամ ո՛ւր կ'երթայ »:

6. Նիկողիմոս ըսաւ. « Ինտո՞ր կրնայ ըլլալ այդ բանը »:

Յիսուս ըսաւ. « Իսրայէլի վարդապետներէն մէկն ես եւ այդ բանը չե՞ս գիտեր: Եթէ երկրաւոր բաներ ըսի ձեզի եւ կը դժուարանաք հաւատալու, ի՞նչպէս եթէ երկնաւոր բաներ ըսեմ՝ պիտի հաւատաք »:

7. Շարունակեց Յիսուս իր խօսքը եւ ըսաւ. « Մարդոցմէ մէկը երկինքը չելաւ. հապա մինակ մարդուն որդին (ես), որ երկինքէն իջաւ եւ որ միշտ է երկինքի մէջ:

Ո՛վ որ հաւատայ մարդուն որդիին՝ յաւիտենական կեանք պիտի ընդունի »: Շարունակելով իր խօսքը յարեց Յիսուս.

8. « Վասն զի ա՛յնպէս սիրեց Աստուած աշխարհը, որ մինչեւ անգամ իր միածին որդին տուաւ, որպէս զի ամէն ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանքը ընդունի: Որդիին հաւատացողը չպիտի դատապարտուի, իսկ անոր չհաւատացողը արդէն իսկ դատապարտուած է »:

9. « Դատաստանն ալ աս է, լոյսը աշխարհ եկաւ ու մարդիկ (անհաւատները) մութը լոյսէն աւելի սիրեցին, վասն զի իրենց գործքերը չար էին »:

(Հայոց Ուրբ Եկեղեցին վաղուց ի վեր սովորութիւն ըրած է նորածին երախաները մկրտել Յիսուսի խօսած այն բացարձակ հրամանին համար թէ՛ « Ո՛վ որ չէ ծնած ջրէն եւ Հոգիէն չիկրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել »:)



Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Յիսուսի պսոյսը Հրեասանի մէջ

1. Այդ խօսակցութենէն վերջ Յիսուս իր աշակերտներով սկսաւ պատիլ Հրէաստանի մէջ եւ քարոզել : Իր քարոզութեան նիւթն էր « Ժամանակը լրացած է , Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է , ապաշխարեցէ՛ք ու Աւետարանին հաւատացէ՛ք » :

2. Աշակերտները կը մկրտէին ա՛ն ամենը , որոնք փափաքով Յիսուսի մօտ կուգային : Մի և նոյն ատեն ջրաշատ Յայենոն ըսուած տեղը Յովհաննէս ալ կը մկրտէր :

3. Յովհաննէսի աշակերտները եկան իրեն ու ըսին . « Ռարբի , Յորգանանէն անդին քեզի հետ եղողը (Յիսուս) որուն համար դուն վկայեցիր « Թէ սա է Աստուծոյ գառը » , հաւատարիկ ան մկրտել սկսեր է ու ամէնքը անոր քով կ'երթան » :

4. Յովհաննէս ըսաւ . « Մէկը չիկրնար բան մը ընել թէ որ Աստուծմէ իրեն տրուած չըլլայ . դուք կը վկայէք որ ես ըսի թէ ես Մեսիան (Քրիստոս) չեմ , հապա անոր առջեւէն ղրկուած կարապետ մը , Հարսը (եկեղեցին) ունեցողն է փեսան (Քրիստոս) . Իսկ ես փեսային բարեկամն եմ , որ մօտիկ կ'ընեմ անոր ձայնին և ուրախ միայն կրնամ ըլլալ :

Գիտցէ՛ք որ այս բերախոսութիւնը որ իմս է լցուած է : « Անիկայ պէտք է աճի ու ես պպտիկնամ » :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Յիսուսի խօսակցութիւնը Սամարացի կնոջ հետ

1. Յիսուսի հոչակը կը տարածուէր , երեսպաշտ փարիսեցիներու սրտերուն մէջ կ'սկսէր նախանձի ոգին ծնիլ , ուստի և Յիսուս որոշեց ելլել Հրէաստանէն , Գալիլիա երթալ և հոն շարունակել իր քարոզութիւնները :

Հրէաստանէն Գալիլիա երթալու ընական ճամբան էր Սամարիայի երկիրը , ուստի և անկից ճամբորդեց :

2. Սիւքար քաղաքին մօտ Յակոբ նահապետին ջրհորին քով նստաւ Յիսուս , քանզի ճամբան յոգնած էր :

3. Նոյն միջոցին Սամարիայէն կին մը եկաւ ջուր հանելու : Յիսուս ըսաւ անոր . « Ինձի ջուր տուր խըմելու » . վասն զի աշակերտները քաղաք դացած էին ուտելիք գնելու :

4. Սամարացի կնիկը պատասխանեց . « Դուն Հրէայ մարդ՝ ի՞նչպէս ինձմէ ջուր կ'ուզես , քանի որ ազգակիցներդ մեզի հետ հաղորդակցութիւն չունին » : Յիսուս պատասխանեց . « Թէ որ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը և ճանչնայիր թէ ո՛վ է ան որ քեզմէ խմելու ջուր կ'ուզէ՝ դուն անկից պիտի ուզէիր եւ անիկա քեզի պիտի տար կենդանի ջուր » :

5. Կնիկը ըսաւ . « Տէ՛ր , դուն դոյլ անգամ չուտես , հօրն ալ խորունկ է . դուն ո՛ւտկից պիտի կըր-



նաս ունենալ կենդանի ջուրը, դուն միթէ Յակոբ նա-  
հապետէն մե՞ծ մէկն ես, որ աս ջրհորը բացաւ » :

Ե. Յիսուս պատասխանեց. « Ամէն ո՛վ որ աս  
ջուրէն խմէ՝ նորէն պիտի ծարաւնայ, բայց իմ տուած  
ջուրէս խմողները յաւիտեան չպիտի ծարաւնան, իսպա-  
այդ ջուրը պիտր ըլլայ խմողին մշտանոս ջուրի աղ-  
բիւր մը յաւիտենական կեանքի համար » :

Ծ. Կինը ըսաւ. « Տէ՛ր, տո՛ւր ինձի այդ ջուրէն



որպէս զի ա՛լ չծարաւնամ և չգամ հոս ջուր տա-  
նելու » :

Յիսուս ըսաւ. « Գնա՛ Էրիկդ կանչէ ու եկէք մէկ-  
տեղ » : Կինը պատասխանեց. « Տէ՛ր, ես Էրիկ չու-  
նիմ » :

Յիսուս ըսաւ. « Շիտակ խօսեցար թէ՛ ես Էրի-  
չունիմ, վասն զի հինգ Էրիկ փոխած ես ու հիմա է  
ուան քովդ եղտը Էրիկդ չէ » :


Տ. Կինը ըսաւ. « Տէ՛ր, կ'երևի թէ դուն մարգա-  
րէ մըն ես, մեր հայրերը (Սամարացիները) սորվեցու-  
ցեր են մեզի թէ սա լեռանը (Գարիզին) վրայ երկր-  
պագութիւն ընելու է, մինչդեռ դուք Հրէաներդ կ'ը-  
սէք թէ մինակ Երուսաղէմի մէջ արժան է՝ երկրպա-  
գութիւն ընել Աստուծոյ » :

Ծ. Յիսուս ըսաւ. « Պիտի գայ ժամանակ և հի-  
մակ ալ սկսած է՝ երբ երկնաւոր Հօր երկրպագութիւն  
պիտի ընեն ճշմարիտ հաւատացեալները՝ հոգիով ու  
ճշմարտութիւնով » :

Վասն զի Հայրն ալ այդպիսի երկրպագողներ  
կ'ուզէ » :

10. Յիսուս ըսաւ նորէն. ԱՍՏՈՒԱԾ ՀՈԳԻ Է Եւ  
հոգիով ու ճշմարտութիւնով պէտք է անոր երկրպա-  
գեն հաւատացողները: Կինը ըսաւ. « Տէ՛ր, գիտեմ  
որ Մեսիան երբ գայ, մեզի պիտի սորվեցնէ այդ ա-  
մէնը » : Յիսուս ըսաւ անոր. « Ես եմ Մեսիան » :

11. Կինը սափորը ձգեց եւ գնաց իր քաղաքա-  
ցիներուն պատմեց թէ ջրհորին քով կար մէկը որ իմ  
գործերս գփացաւ. « Միթէ ա՛ն է Մեսիան » : Բազու-  
քացիները գացին եւ տեսան Յիսուսը ու աղաչելով  
տարին իրենց հետ եւ երկու օր վար դրին ու մտիկ  
ըրին անոր խրատները եւ կնկանը կ'ըսէին. « Ձէ թէ  
քու գլխէդ անցածները պատմած ըլլալուն՝ իսպա իր  
չնորհալի խօսքերուն համար կը հաւատանք թէ ա-  
նիկա է աբխաթի նումարիս փրկիչը » :





### Գ Լ ՈՒ Խ Ժ Է .

#### Յիսուսի գործերը Գալիլիայի մէջ

1. Յիսուս հասնելով Գալիլիա՝ ձգեց Նազարէթ քաղաքը եւ Կափառնաոււմը ըրաւ իր բնակութեան տեղ եւ սկսաւ իր քարոզութիւնները :

2. Շատ շուտով հռչակուեցաւ Յիսուսի գալը եւ Գալիլիացիք ընդունեցան զանիկա : Յիսուս կը խօսէր ժողովրդանոցներուն մէջ եւ ամէնքէն համակրանք կը տեսնէր, վասն զի շատերը տեսեր էին Յրուսաղէսի մէջ անոր բռնած պատկառելի դիրքը եւ ցուցած նշանները :

3. Իր պտոյտին մէջ հանդիպեցաւ անիկա նորէն Կանա քաղաքը եւ ազնուականի մը որդին հիւանդութենէ ազատելով՝ անցաւ անկէ եւ եկաւ իր նախկին բնակավայրը Նազարէթ քաղաքը :

4. Շաբաթ օրը, իր սովորութեանը համաձայն, զնաց ժողովրդանոցը եւ բեմ ելաւ որ կարդայ . անոր ձեռքը տուին Եսայի մարգարէին գիրքը : Գիրքը բացաւ Յիսուս ու գտաւ այն տեղը (Գլ. ԿԱ. 1-2.) ուր գրուած էր « Տիրոջը հոգին իմ վրաս է, որ զիս օծեց, աղքատներուն աւետարան քարոզելու, զիս զըրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիններուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն շնորհելու, հարստահարութիւն կրողները ազատ թող տալու Տիրոջը ընդունելի դատը քարոզելու :

5. Գիրքը գոցեց անիկայ, պաշտօնեային տուաւ ու նստան, եւ ժողովրդանոցին մէջ եղողներուն ամենը՝ աչքերնին տնկած՝ անոր կը նայէին :

6. Յիսուս ըսաւ անոնց. « Այսօր այս գրուածքը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին » :

Ամէնքն ալ կը զարմանային անոր բերնէն ելած շնորհայի խօսքերուն վրայ ու իրարու կ'ըսէին. « Միթէ ասիկա Յովսէփին որդին չէ՞ » :

7. Յիսուս ըսաւ անոնց. « Իրաւ որ դուք հիմակ ինձի պիտի զրուցէք սա առակը — Բժիշկ, բըժըշկէ՛ քու անձդ, ու որչափ բաներ որ լսեցինք թէ Կափառնաոււմի մէջ ըրիր, հոս քու քաղքիդ մէջ ալ ըրէ՛ » :

« Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ մարգարէ մը իր քաղքին մէջ ընդունելի չէ : Շատ այրիներ կային Նղիայի օրերը Իսրայէլի երկրին մէջ, բայց երաշտութեան միջոցին Նղիան զրկուեցաւ Սարեփթացի այրիին որ օտար էր : Շատ բորոտներ կային Նղիսի օրերը, բայց Նղիսէ բժշկեց մինակ Ասորի Նէէմանը » :

8. Նազարէթցիները սաստիկ բարկացան Յիսուսի այս բաղդատութենէն, որ պայծառ կերպով կը հսկըցնէր իրենց նախանձարեկ ոգին, ելան բռնեցին եւ լերան գահավէժէն վար նետելու տարին . սակայն անիկա անցաւ անոնց մէջէն ու զնաց :

9. Գալիլիայի ծովուն քովերը կը պտտէր Յիսուս երբ տեսաւ իր առաջին աշակերտները, որոնք գացեր էին և ձուկ կ'որսային . կրկին կանչեց զանոնք (Պետրոսն ու Անդրէասը) ու ըսաւ. « Եկէ՛ք, ես ձեզ մարդոց որսորդ պիտի ընեմ » :

10. Ծովեզերքը՝ քիչ մը առաջ երթալով, տեսաւ Ջէրէթէոսին երկու զաւակները՝ Յակոբոսն ու Յովհաննէսը, որոնք իրենց նաւին մէջ ուռկան կը կարկտէին . զանոնք ալ կանչեց : Անոնք



ալ իրենց հայր՝ Չէրէթէոսը վարձկաններուն հետ նա-  
ւին մէջ թողուցին ու Յիսուսի աշակերտեցան:

**11.** Ծովեզերքէն՝ իր աշակերտներովը նորէն  
դարձաւ Յիսուս Կափառնաուսի քաղաքը ու շարաթ-  
օրերը կը քարոզէր անոնց ու ամէնն ալ կը դարմա-



նային անոր վրայ, վասն զի մինչեւ այն օրը իրեն  
սորված վարդապետներու ու սուցումէն տարբեր կը խօ-  
սէր: Անիկա իշխանաբար կը խօսէր ու կը մեկնէր Ս  
Գիրքը:

Յիսուս կը բժշկէր ամէն կարգի հիւանդներ ուստ  
եւ անոր համբաւը կը տարածուէր ամէն կողմ:

**12.** Ինք շրջան կ'ընէր բոլոր Գալիլիան սորվե  
ցնելով ու բժշկելով հիւանդները: Իսկ երբ քաղաք  
ները պիտի մտնէր եւ անապատ տեղեր՝ կը կենալ  
ժողովուրդը խուռն բազմութիւնով կը դիմէր անո  
յսելու անոր շնորհալի ջարդները:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը.

### Շաբաթի հանգիստի եւ Մեղի բողոքեան մասին Յիսուսի բռնած դիրքը

**1.** Շատ օրեր պտըտելէ վերջը նորէն Կափառ-  
նաուսի դարձաւ Յիսուս: Երբ քաղաքացիս իմացաւ  
անոր գալը, մեծ բազմութիւնով վազեց տունը:

**2.** Չորս մարդ միանալով անդամալոյծ մը ոին  
ու տուն կը բերէին Տէր Յիսուսին, որպէս զի զանի  
կա բժըշկէ:

**3.** Ամբողջ աշնան երկիւղածութեամբ մտիկ  
կ'ընէր Յիսուսի, ու տեղէն չէր շարժէր, որ դուռը  
անանցանելի էր. ուստի և երբ անդամալոյծը բերող-  
ները հասկցան որ դռնէն անկարելի է ներս մտնել,  
չըջան մը ըրին, տունին երդիքն ելան ու առաստաղէն  
մաս մը ետ առնելով անդամալոյծը Տէր Յիսուսին առ-  
ջեւ իջեցուցին սաւանովը:

**4.** Յիսուս տեսաւ անոնց օրտին փափաքը ու  
ըսաւ. « Չաւա՛կս, թող ներուին քու մեղքերդ ».

Մէկ քանի զպիրներ (գիտնականներ) իրենց մըտ-  
քէն ըսին. « Աս ի՛նչ մեծ հայհոյութիւն. Աստուծմէ  
զատ ո՞վ կրնայ մեղքի թողութիւն տալ »:

**5.** Յիսուս տեսաւ անոնց մտքին մէջ անցած  
զազտուկ խորհուրդը ու ըսաւ. « Ի՛նչ է ձեր միտքէն  
անցած խորհուրդը. ո՞ր բանը դիւրին է, — Անդա-



մալոյծին ըսել թէ՛ ներուած ըլլան քու մեղքե՛րդ, ըսել — Ելի՛ր, ա՛ռ անկողինդ ու տուն գնա՛ » :

6. Որպէս զի գիտնաք թէ Մարդուն Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերու թողութիւն տալու ահաւաստի կ'ըսեմ անդամալոյծին — Ո՛վ դու, ելի՛ր, անկողինդ ա՛ռ ու գնա՛ » :

7. Անդամալոյծը շուտով ելաւ, շալկեց անկողինը ու գնաց և բոլոր բազմութիւնը փառք տուաւ Աստուծոյ ու ըսաւ թէ ասանկ բան մը տեսած չէին :

8. Նորէն մեկնեցաւ քաղքէն եւ ծովեզրը ելաւ, հոն տեսաւ Մատթէոսը (Ղեւի Ալփեայ ալ կը կոչուէր) որ մաքսաւորութիւն կ'ընէր. զանիկա ալ կանչեց իրեն աշակերտ ըլլալու : Մատթէոս հետեւեցաւ անմիջապէս :

9. Յիսուս հիւր եղաւ Մատթէոսին, ուր հաւաքուեցան մաքսաւոր եւ ստորին կարգի մարդիկ լսել Յիսուսի խրատները : Փարիսեցիներն ու դպիրները խոժոռեցան Յիսուսի ընթացքին եւ աշակերտներուն գիտողութիւն ըրին. « Ինչո՞ւ ձեր վարդապետը առանկներուն հետ կը խօսակցի՛ կ'ուտէ ու կը խմէ » :

10. Յիսուս ըսաւ. « Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն : Իս չեկայ արդարները հրաւիրելու՝ հապա մեղաւորները » :

11. Յիսուս և աշակերտները շարաթ օր մը արտերէն կ'անցնէին. աշակերտները ցորենի հասկեր փրցուցին և շփելով՝ ցորենը կը հանէին ու կ'ուտէին : Փարիսեցիները ըսին անոր. « Տե՛ս, աշակերտներդ շարաթ օրը ի՛նչ բաներ կ'ընեն » :

12. Յիսուս ըսաւ. « Շարաթը մարդուն համար

եղաւ և ո՛չ թէ մարդը շարաթին համար. ապա ուրեմն Մարդուն Որդին շարաթին ալ տէրն է » :

13. Յաջորդ շարաթ օրը, ժողովարանին մէջն էր Յիսուս : Հոն ձեռքը գօսացած մէկը կար. փարիսեցիները կ'սպասէին որ Յիսուս բժշկէր զանիկա՝ իրենց չարախօսութեան նիւթ ընելու համար՝ անոր շարաթը չի յարգելը :

14. Յիսուս հասկցաւ անոնց գաղափարը. կանչեց գօսացածը ու ըսաւ. « Մէջ տեղը կայնէ՛ » , դարձաւ ու փարիսեցիներուն ըսաւ, « Ո՞ր բանը շարաթին արժանաւոր է. բարի՞ք գործելը թէ չարութիւն խորհիլը. մարդ մեռցնելը թէ ազատելը :

Անոնք լռեցին :

15. Յիսուս բարկութեամբ լեցուած անոնց նայեցաւ ու անոնց միտքին կուրուսթեան վրայ տրտմած՝ ըսաւ գօսացած մարդուն. « Ձեռքդ երկնցո՛ւր » . մարդը երկնյուց եւ առողջացած էր անոր ձեռքը :

16. Փարիսեցիները՝ յաղթահարուած՝ դուրս ելան ժողովարանէն եւ Հերովդէսեան ըսուած տարբեր կուսակցութեան մը զլիաւորներուն հետ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս կրնան օպաննել զանիկա :





### Գ Լ ՈՒ Խ Ժ Թ.

#### Յիսուս կ'ընօրէի սասաներկու առաքեալները

**1.** Յիսուս նորէն ելաւ պտոյտի եւ գնաց ծովեզերքը եւ շատ ժողովուրդ իրեն կը հետեւէր :

Անիկա կը բժշկէր իրեն զիմոզ ամէն կարգի հիւանդները :

**2.** Լեւոր ելաւ Յիսուս եւ հոն մինչեւ լոյս առթիւ կեցաւ . առաւօտուն՝ լեռնէն իջնելով իրեն ու-



զած մարդիկը կանչեց ու անոնցմէ տասներկուքը զատեց . որ միշտ իրեն հետ ըլլան ու զանոնք զրկէ քարոզելու եւ անոնք իշխանութիւն ունենան ամէն կարգի ցաւեր բժշկելու :

**3.** Տասներկուքէն առաջինը Սիմոն էր , որուն

անունը Յիսուս դրաւ Պետրոս : Միւսներէն՝ Յակոբոսն ու Յովհաննէսին անունը դրաւ , Որդիք Որոման , Միւսներն էին Անդրէասն ու Փիլիպպոսը . Մատթէոսն ու Թովմասը , Բարթուղիմէոսն ու Թագէոսը : Ալիքեան Յակոբոսը , Սիմոն Կանանացին եւ Յուդա Իսկարիովտացին , որ ապա վատութեամբ մատնիչ եղաւ Տէր Յիսուսին :

**4.** Այս տասներկուքները առաքեալ կոչուեցան :



### Գ Լ ՈՒ Խ Ի.

#### Յիսուսի լեռան քարոզը

( Առաջին մաս )

**1.** Յիսուս այդ լեռան վրայ տափարակ տեղ մը իջաւ տասներկու առաքեալներուն հետ մէկտեղ և տեսնելով որ բոլոր ժողովուրդը իրեն բոլորտիքը խռնուած է մտիկ ընելու իր խօսքերը՝ բերանը բացաւ և սկսաւ սորվեցնել անոնց ու ըսել .

1. « Երանի՛ հոգիով աղքատներուն , վասն զի անոնցն է երկինքի թագաւորութիւնը :

2. « Երանի՛ սգաւորներուն , վասն զի անոնք պիտի մխիթարուին :

3. « Երանի՛ հեզերուն , վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը :

4. « Երանի՛ անոնց՝ որոնք անօթի ու ծարաւ են



արդարութեան , վասն զի անոնք պիտի կշտանան :

5. « Երանի՛ր ողորմածներուն , վասն զի անոնք ուղորմութիւն պիտի գտնեն :

6. « Երանի՛ր անոնց , որոնք սրտով սուրբ են , վասն զի անոնք պիտի տեսնեն զԱստուած :

7. « Երանի՛ր խաղաղութիւն ընդներուն , վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին :

8. « Երանի՛ր անոնց , որոնք հալածուած են արդարութեան համար , վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է :

9. « Երանի՛ր է՛ ձեզի , երբոր կը նախատեն ու կը հալածեն ու սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին վրանիդ ինձի համար , ցնծացէ՛ք և ուրախ եղէ՛ք , վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը :

« Յիշեցէ՛ք թէ այս կերպով հալածուեցան ձեզմէ առաջ եկած մարգարէները :

2. Յիսուս ըսաւ մասնաւորապէս տասներկու քին և բոլոր ժողովուրդին ընդհանրապէս . — « Դուք էք երկրի աղբ . հապա թէ որ աղը իր համը կորսնցնէ , (ինչպէս կորուսած էին օրէնքին մեկնիչ փարիսեցիները) , ինչով պիտի աղուի ինքը , անկէց ետքը անիկա բանի մը չիգար՝ հապա նետուելու » :

3. Յիսուս ըսաւ . « Դո՛ւք էք աշխարհի լոյսը , ինչպէս որ լեբան մը վրայ շինուած քաղաք մը չիկրոնար պահուիլ անանկ ալ ճրագը չեն վառեր ու գըրուանի տակ դներ , հապա աշտանակին վրայ կը դնեն , որպէս զի լոյս տայ տանը մէջ եղողներուն :

« Ասանկ պէտք է լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին , որպէս զի ամէնքը տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է » :

4. Յիսուս ըսաւ . « Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւերելու , չեկայ քակելու՝ հապա լրացնելու : Վասն զի , ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , մինչև որ երկինքն ու երկիրը անցնին , օրէնքին ամէնէն փոքրիկ նշանագիրն անգամ չպիտի անկատար մնայ՝ հապա բոլորն ալ պիտի կատարուի » :

5. Յիսուս ըսաւ . « Թէ որ ձեր արդարութիւնը դպիրներուն եւ փարիսեցիներուն արդարութենէն աւելի չըլլայ , բնաւ չպիտի մտնէք երկինքի արքայութիւնը » :

6. Յիսուս ըսաւ . « Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն՝ Սպանուքիւն մի՛ ընեք . և , ո՛վ որ սպանութիւն ընէ , պարտաւոր պիտի ըլլայ դատաստանի . բայց ե՛ս կ'ըսեմ ձեզի . ո՛վ որ պարապ տեղը իր եղբորը սրդողի ու յիմար կամ անմիտ ըսէ , գեհեանին կրակին պարտաւոր պիտի ըլլայ » :

« Թէ որ ընծայ բերեր ես սեղանին ու հոն միտքդ գայ թէ քու եղբայրդ խէթ ունի՝ քեզի հետ , ձգէ՛ր ընծադ , գնա՛ առաջ եղբորդ հետ հաշտուէ , ետքը եկուր ընծադ մատուցանելու :

7. Լսեր էք որ ըսուեցաւ , Շնուքիւն մի՛ ընեք . բայց ե՛ս ձեզի կ'ըսեմ , ո՛վ որ կին մարդու կը նայի անոր ցանկանալու համար , ա՛լ անիկա իր սրտին մէջը շնութիւն ըրաւ անոր հետ » :

8. Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն — Սուս երգում մի՛ ընեք . հապա ըրած երգումներդ վըճարէ . բայց ե՛ս կ'ըսեմ ձեզի , ամենեւին երգում մի՛ ընէք : Ձեր խօսքը թող ըլլայ Այո՛ւն՝ այո՛ և Ո՛չը՝ ոչ : Քանզի ասկէց աւելին՝ չարէն առաջ կուգայ » :



Չ. « Լսեր էք որ ըսուեցաւ — Աչխի տեղ աչք, աղուայի տեղ աղուայ — բայց եՍ ձեզի կ'ըսեմ. չարին հակառակ մի' կենաք »:

10. Լսեր էք դուք որ ըսուեցաւ. Քու ընկերդ սիրես ու քօնամիդ աճես. — բայց եՍ ձեզի կ'ըսեմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիները, որհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք անոնց, որոնք ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն, որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիքը ըլլաք. քանզի Ան իր արեւն ու անձրեւը կը ըրկէ թէ՛ չարերուն եւ թէ բարիներուն վրայ »:

11. « Եթէ դուք սիրէք մինակ ձեզ սիրողները, ի՞նչ վարձք կ'ունենաք, չէ՞ որ մաքսաւորներն ալ կ'ընեն այդ բանը, ու թէ որ մինակ ձեր բարեկամները բարեւէք, ի՞նչ աւելի կ'ընէք, չէ՞ որ մեղաւորներն ալ նոյնը կ'ընեն »:

« Դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է »:



### Գ Լ Ո Ւ Խ Ի Ա.

#### Յիսուսի լեռան քարոզը

( Մասն երկրորդ. — Ա. — Ողորմութիւն )

1. Յիսուս ըսաւ. « Զգոյ՛ջ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջեւ չգործէք, անոնց երեւնալու համար, եթէ ոչ ձեր երկնաւոր Հօրմէն վարձք չէք

առնելու, երբ ողորմութիւն կ'ընես, առջևդ փող մի' հնչեցնել, ինչպէս որ կեղծաւորները կ'ընեն որպէս զի մարդոցմէ փառաւորութիւն: Ըշմարիտ կ'ըսեմ ձեզի, անոնք իրենց վարձքը առով առած կ'ըլլան »:

2. « Երբ ողորմութիւն կուտաս, ձախ ձեռքդ պէտք է չգիտնայ թէ աջ ձեռքդ ի՞նչ կը գործէ, որպէս զի ըրած ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ՝ քեզի յայտնապէս հատուցանէ »:

( Բ. — Սղօքք )

3. Երբոր աղօթք կ'ընես, կեղծաւորներուն նըման չըլլաս, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ և հրապարակներուն անկիւնը կայնելով աղօթել, որպէս զի մարդոց երեւան. ճշմարիտը կ'ըսեմ ձեզի, անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան »:

4. Դուք երբոր աղօթք կ'ընես, մտի՛ր սենեակդ և ծածուկ աղօթքի կայնէ՛ քու երկնաւոր Հօրդ, եւ երկնաւոր Հայրդ, որ գաղտուկը կը տեսնէ, քեզի պիտի հատուցանէ յայտնի կերպով »:

5. Հեթանոսներուն պէս ալ շատախօս մի' ըլլաք, վասն զի անոնք կը կարծեն թէ շատ խօսելուն համար պիտի լսուին. մի՛ նմանիք անոնց, ինչու որ երկնաւոր Հայրը գիտէ ձեր պէտքերը դուք դեռ իրմէ չի խնդրած »:

6. « Այսպէս աղօթք ըրէք.

Ո՛վ Հայր մեր, որ երկինքն ես. քու անունդ սուրբ ըլլայ: Քու թագաւորութիւնդ գայ: Քու կամքդ ըլլայ՝ ինչպէս որ երկինքը, անանկ ալ երկրիս վրայ.



մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի տուր : Մեզի ներէ մեր յանցանքները՝ ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն : Մեզ փորձութեան մի՛ տանիր, հապա չարէն ազատէ. վասն զի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը եւ փառքը, յաւիտեանս. ամէն » :

( Գ. — Ծոմապահուիւն )

Ծ. « Երբոր ծոմ կը պահէք՝ կեղծաւորներուն պէս տրտում երես մի՛ ըլլաք, վասն զի անոնք իրենց երեսները կ'աւրեն, որպէս զի մարդոց երեւան թէ ծոմ կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան :

Տ. « Դուք երբոր ծոմ կը պահէք, գլուխնիդ օծեցէ՛ք և երեսնիդ լուացէ՛ք, որպէս զի ծոմ պահողի պէս չերեւաք մարդոց եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ քեզի յայտնապէս պիտի հատուցանէ » :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե .

Յիսուսի լեւան փարոզը

(Մասն Երրորդ)

Ա. Յիսուս ըսաւ. « Երկրի վրայ ձեզի գանձեր մի՛ զիղէք, ուր որ ցեցն ու ժանգը կ'ապականեն և ուր դողերը ակամ կը ծակեն ու գողնան : Հապա ձեզի

գանձեր զիղեցէ՛ք երկինքը, ուր ո՛չ ցեց կայ, ո՛չ ուտիճ և ո՛չ ալ գողեր կրնան գողնալ » :

« Ձեր գանձը ո՛ւր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ » :

Զ. Մարդ մը շի կրնար երկու տէրերու ծառայել. մէկը պիտի առէ ու միւսը պիտի սիրէ անշուշտ : « Ձէ՛ք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնային » :

Յ. Կ'ըսեմ ձեզի, շատ հոգ մի՛ ընեք ձեր կեանքին կամ ձեր հագուստին մասին. նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, զորս Ձեր Երկնաւոր Հայրը կը հոգայ, չէ՞ որ դուք անոնցմէ լաւ էք » :

« Նայեցէ՛ք դաշտի շուշաններուն. ինչպէս կ'ածին, նոյն ինքն Սողոմոն անոնցմէ մէկին պէս չհագուեցաւ իր բոլոր փառքին մէջ, և երբ դաշտին մէջի խոտը, որ մէկ օրուան կեանք ունի, Աստուած այսպէս կը հագուեցնէ, հապա որչա՞փ աւելի ձեզ, թե՛րահաւատներ » :

Դ. « Առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնն ու արդարութիւնը, և ատ բոլոր բաները ձեզի պիտի տրուին, վասն զի ձեր Երկնաւոր Հայրը զիտէ թէ այդ բաները պէտք են ձեզի. ուստի և ատոնք մի՛ խնդրէք իրմէ » :

Ե. « Մի՛ դատէք որ չդատուիք. վասն զի՛ ինչ չափով որ չափէք ուրիշները՝ նոյն չափով պիտի չափուի ձեզի » :

« Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես ու քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ »

« Կեղծաւոր, առաջ քու աչքիդ գերանը հանէ ու վե՛րջը նայէ որ հանես շիւղը եղբօրդ աչքէն » :



Գ. Ուղեցէ՛ք ու պիտի գտնէք, դուռը զարկէ՛ք ու պիտի բացուի՝ ձեզի :

« Զեզմէ ո՞ր մարդն է, որ երբ իր զաւակը հաց ուղէ՛ քար տայ անոր, կամ թէ որ ձուկ ուղէ օձ տայ անոր. ուստի դուք որ չար էք և ձեր զաւկներուն աղէկ ընծայ տալ գիտէք, որչա՛փ աւելի ձեր Հայրը, որ Երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց, որոնք իրմէ կը խնդրեն » :

Ծ. « Նե՛ղ դռնէն ներս մտնելու ջանացէք, վասն զի անիկա կը տանի դէպի կեանքը ու քիչուոր են զանիկա գտնողները » :

« Լայն է դուռը ու ընդարձակ՝ ճամբան որ կը տանի մարդիկ կորուստի, և շատուոր են այդ դռնէն մտնողները » :

Տ. « Ամէն ինչ որ կ'ուղէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէ՛ք : Ա՛ս է մարգարէներուն և օրէնքին սորվեցուցածը » :

Ծ. « Զգուշացէ՛ք սուտ ուսուցիչներէն, որոնք զրտէն գառի զգեստ հագեր են, բայց իրենք ներսէն գայլ են : Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զիրենք. միթէ՛ փուշերէն խաղող կը քաղե՞ն կամ տատասկէն թուզ :

« Բարի ծառը չի կրնար չար պտուղ տալ, ո՛չ ալ չար ծառը բարի պտուղ » :

10. « Ինձի «Տէր» ըսողները չեն կրնար արքայութիւնը մտնել, հապա ամէն անոնք, որոնք Երկնաւոր Հօրս կամքը կը կատարեն : Վերջին դատաստանին օրը շատեր ինձի պիտի ըսեն «Տէ՛ր, չէ՞ որ քու անունովդ մարգարէացանք ու հրաշքներ գործեցինք» : Ան

ատենը Ես յայտնապէս անոնց պիտի ըսեմ. — Մէկդի գացէ՛ք քովէս. ես ձեզ բնաւ չէի ճանչնար, դուք անօրէնութիւն կը գործէիք :

11. Վերջացուց Յիսուս իր խօսքերը սա հատուածով. « Ով որ աս խօսքերը կը լսէ ու կը կատարէ կը նմանի խելացի մարդու մը որ իր տունը քարին վրայ հիմնեց, իսկ ա՛ն որ այս խօսքերը կը լսէ ու չի կատարեր, կը նմանի անմիտ մարդու մը որ իր տունը աւազի վրայ հիմնեց :

« Երբ անձրևները եկան, հոսանքները քալեցին, հովերը փչեցին ու տանը զարկին, քարին վրայինը մնաց անսասան. իսկ աւազին վրայ շինուածը կործանեցաւ » :

— Այս քարոզով Տէր Յիսուս իր աստուածային ծագումը հռչակեց ժողովուրդին :



### Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Յիսուս Գալիլիայի մէջ Երկրորդ օրջան

մը կ'ընէ

1. Նորէն ելաւ Յիսուս պտտելու բոլոր Գալիլիան. քաղաքներն ու գիւղերը կը հանդիպէր ու Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր ամէնուն՝ իր քարոզներովը :

12. Աշակերտները հետն էին :



2. Իր հետ էին նաև մէկ քանի կիներ, որոնք իրենց սաացուածքովը ծառայութիւն կ'ընէին անոր:

Այդ կիներէն մէկը կը կոչուէր Մարիամ Մագդաղենացի զոր Յիսուս բժշկեց էր ծանր հիւանդութենէ մը, միւս մը կը կոչուէր Յովհաննա, ուրիշ մը Շուշան և ուրիշներ ալ, որոնք ամենքը երախտապարտ էին անոր՝ զիրենք բժշկելուն համար:

3. Տիրերական ծովուն եզերքը մեծ բաղմութիւն հաւաքուած էր զինքը մտիկ ընելու, ուստի Յիսուս նաև մը մտաւ և քիչ մը ծովուն բացը կենալով խօսեցաւ սա առակը:

«Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանելու ու ցանած ատեն մէկ քանին ճամբուն քով ինկան ու օտնակոխ եղան, երկինքի թռչունները զանոնք կերան: Ուրիշ մը ապառաժի վրայ ինկաւ ու բուսնելուն պէս չորցաւ վասն զի հող չկար: Երրորդ մը փուշերուն մէջ ինկաւ և փուշերը անոր հետ բուսնելով զանիկա խեղդեցին: Ուրիշ մը ինկաւ աղէկ ու պարարտ հողի մէջ ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ »:

4. Յիսուս ըսաւ. « Ան որ լսելու ականջ ունի, թո՛ղ լսէ: »

5. Տասներկուքները հարցուցին Յիսուսի թէ այդ առակին իմաստն ի՞նչ էր: Յիսուս ըսաւ անոնց, « Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, իսկ առակով կը խօսիմ այնպիսիներուն, որոնք տեսնելով չեն տեսներ և լսելով չեն իմանար ու միտք առներ: »

Եսայի մարգարէին ըսածը կը կատարուէր այսպէս. « Աս ժողովուրդին սիրտը թանձրացաւ և աչքերնին զոցեցին որ չըլլայ թէ տեսնեն աչքովին, և ականջ-

նին խփեցին որ չլսեն ու զարձի գան՝ ու ես զանոնք բժշկեմ: »

6. Յիսուս ըսաւ. Առակին իմաստն սա է.

— Սերմը Աստուծոյ խօսքն է: Ճամբուն վրայ ինկածը ա՛յն է որ մէկը կը լսէ Աստուծոյ խօսքը ու չարը կուգայ անոր սրտին մէջի ցանուածը կը յափշտակէ: Ապառաժի վրայ ցանուածը ա՛յն է որ մէկը կը լսէ Աստուծոյ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանիկա, բայց իր մէջը արմատ չունենալուն, քիչ ժամանակ կը տեւէ և երբոր նեղութիւն կամ հալածանք ըլլայ, շուտ մը կը գայթակղի: Փուշերուն մէջ ցանուածը այն է որ մէկը կը լսէ Աստուծոյ խօսքը՝ աշխարհիս հոգերն ու զբաղմունքները կամ մեծութեան պատրանքները կը խեղդեն զանիկա ու անպտուղ կ'ընեն: Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը ա՛յն է որ երբ մէկը կը լսէ Աստուծոյ խօսքը՝ միտքը կառնէ զուարթութեամբ, և համբերութեամբ պտուղ կուտայ, ո՛րը երեսուն, որը վաթսուն և ո՛րն ալ հարիւր: »

Գ Լ Ո Ւ Խ Ի Դ.

Յիսուսի ուրիշ առակները

1. Ուրիշ առակ մ'ալ խօսեցաւ Յիսուս ժողովուրդին. « Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը որ բարի սերմ ցանեց իր ագարակին մէջ. իսկ



երբ քնացաւ անիկա, անոր թշնամին եկաւ և որոմ ցանկելով ցորենին մէջ՝ գնաց:

Երբ հունձքին մէջ որոմն երևցաւ, ծառաներն ըսին. կուզե՞ս տէր, որ որոմները փետտենք. ո՛չ, ըսաւ տէրը, չըլլա՛յ որ որոմին հետ ցորենին ալ վնաս մը հասնի:

Թող մինչև քաղոց մնայ ու ես հնձողներուն կը հրամայեմ որոմները առանձինն խուրձեր շինեն վառելու և ցորենը՝ շտեմարաններս համարելու »:

2. Ուրիշ առակ. «Երկինքի թագաւորութիւնը նըման է մանանեխի հատիկին, զոր մարդը առնելով ազարակին մէջ ցանեց: Այդ հատիկը, որ ամէնէն՝ պըղտիկ սերմն, է բուսնելով կ'աճի ու բանջարներու մեծագոյնը ըլլալով կը ծառանայ, անանկ որ երկինքի թռչունները կուզան և անոր ոստերուն վրայ կը հանգչին »:

3. Ուրիշ առակ. «Երկինքի թագաւորութիւնը նման է խմորի, զոր կին մը առնելով երեք գրիւ ալիւրի մէջ թաղեց մինչև որ անմէնքը խմորուեցաւ »:

4. Առակները խօսելէ վերջ Տէր Յիսուս ձգեց ժողովուրդը ու տուն եկաւ, աշակերտները եկան ու ըսին. « Որոմին առակը մեզի բացատրէ »:

5. Յիսուս ըսաւ. « Բարի սերմ ցանողը մարդուն Որդին է (Յիսուս ինքը). ազարակը այս աշխարհն է. բարի սերմը արքայութեան զաւկներն են. որոմն ալ չարին զաւկներն են: Որոմնացանը սատանան է. հուճճէք աշխարհիս վերջանալն է. հնձողները հրեշտակներն են: Ինչպէս որ որոմը կը ժողվեն ու կրակը կը նետեն, անանկ պիտի ըլլայ աշխարհիս կատարածին օրը »:

6. « Մարդու Որդին պիտի զրկէ իր հրեշտակները և իր թագաւորութեան մէջէն գայթակղիչ ու անօրէն մարդիկը ժողվել տալով՝ կրակէ հնոցը (դժոխքը) նետել պիտի տայ, ուր այդ անօրէնները պիտի լան ու ակօսներնին պիտի կրճտեն »:

7. « Այն օրը արդար մարդիկ արեգակին պէս պիտի պայծառանան ու ցաթեն երկինքի արքայութեան մէջ »:

8. « Ա՛ն որ ականջ ունի լսելու թող լսէ »:



## Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

### Յիսուս Տիբերական ծովին վրայ

1. Առակները լրացուցած օրն իսկ, Յիսուս իրիկուան կողմ ըսաւ. « Եկէ՛ք, ծովուն անդիի կողմը անցնինք »:

2. Աշակերտներն ալ առին զանիկա ու նոյն նաւը մտան. ուրիշ նաւակներ ալ առին ու ճամբան ինկան:

3. Ծովուն բացերը հասնելուն պէս, մեծ մըրիկ մը ելաւ. անանկ որ ալիքները սկսան նաւին մէջ լեցուել, մինչդեռ Յիսուս խոնջած ըլլալուն, նաւուն ետեւի կողմը բարձի մը վրայ կը քնանար:



4. Աշակերտները արթնցուցին զանիկա ու ըսին : «Վարդապետ, հողդ չէ՞ որ կը կորսուինք, մեզ ազատէ՛ » :

5. Յիսուս ըսաւ անոնց . «Թերահաւատներ՛ր, ինչո՞ւ ատանկ վախկոտ էք » :

Ելաւ . հովերուն ու ծովին սաստեց ըսելով . «Դադրէ՛, լուռ կեցի՛ր » . և ծովը խաղաղեցաւ :

6. Նաւին բոլոր մարդիկը զարմացան ու կ'ըսէին . «Ինչպիսի մարդ է աս որ հովերն ու ծովը կը հնազանդին իրեն » :

(Այս դէպքը պայծառապէս ցոյց կուտայ Տէր Յիսուսին աստուածութիւնը՝ քանի որ բնութեան բոլոր զօրութիւններուն կը սաստէ և կը հնազանդին իրեն : Ինչպէս լեռան Քարոզով ցոյց տուած էր թէ ինքն է Տասնարանեայ Օրէնքին օրէնսդիրը, որ այնպէս իշխանաբար կը կատարելագործէր զայն «ԵՍ Կ'ԸՍԵՄ»-ներով :)



### Գ Լ Ո Ւ Խ Ի Զ .

Յիսուս կ'ողջնցնէ Յայրոս իշխանին աղջիկը եւ կը բժեկէ կին մը

1. Այդ ծովային ճամբորդութենէն վերադարձին, նորէն ծովեզերքը կեցաւ Յիսուս և շատ ժողովուրդ իր քով հաւաքուած էր, և ահա ժողովրդին իշխանա-

ւորներէն Յայրոս եկաւ Յիսուսի ոտքը ինկաւ, կ'ազաչէր ու կըսէր . « Աղջիկս հոգեվարք է, եկո՛ւր ու զանիկա մեռնելէն խալտէ » :

2. Յիսուս ելաւ երթալու, ժողովուրդէն շատեր իրեն հետեւեցան՝ այնպէս որ քալած ատենը կը նեղուէր : Բազմութեան մէջ կին մը կար, որ տասներկու տարիներէ ի վեր արիւններթութեան ախտէն բու՛նուած էր :

3. Այդ կինը իր բոլոր ստացուածքը վաճանած էր բժիշկներուն տալով՝ որպէս զի առողջանար . սակայն բժշկուելու տեղ, աւելի զայրացած էր իր ախտը :

4. Այդ կինը մտածեց որ եթէ Յիսուս վարդապետին զգեստներուն ալ մինակ դպչի, անշուշտ կ'աղեկնայ ու գնաց անոր զգեստին ծայրէն բռնեց :

5. Անմիջապէս կտրեցաւ անոր արիւններթութիւնը և կինը զգաց իր հիւանդութենէն բժշկուելը :

6. Յիսուս դարձաւ և ըսաւ ժողովուրդին . «Ան ո՞վ էր որ զգեստներուս դպաւ » : Աշակերտները ըսին . «Կը տեսնես որ ամբոխը կը նեղէ ու կ'ըսես, ո՞վ է որ զգեստներուս դպաւ » :

7. Յիսուս աչքը չորս կողմը կը պտտցնէր . իսկ կինը դողալով եկաւ անոր ոտքը ինկաւ և պատմեց եղելութիւնը :

Յիսուս ըսաւ . « Աղջիկս, հաւատքդ քեզ բժշկեց . գնա՛ խաղաղութեամբ եւ առո՛ղջ եղիւր » :

8. Նոյն միջոցին լուր եկաւ Յայրոսի տնէն թէ « Ալ մի յոգնեցնէր վարդապետը քանզի աղջիկդ մեռաւ » :



Յիսուս ըսաւ. «Յա՛յրոս, մի՛ վախնար, հապա մի-  
նակ հաւատա » :

9. Աշակերտներէն զատեց Պետրոսը, Յակոբոսն  
ու անոր եղբայր Յովհաննէսը և մտաւ Յայրոսի տնէն  
ներս, ուր մեծ բազմութիւն կար հաւաքուած ու  
լալկաններ կական բարձած կուլային աղջկան մահը :

10. Յիսուս ըսաւ լացողներուն. «Ինչո՞ւ կուլաք,  
աղջիկը քնացե՛ր է » : Լսողները ամէնը մէկտեղ ծաղ-  
րեցին Յիսուսի այդ խօսքը :

11. Յիսուս աղջկան ծնողքին ու աշակերտներուն  
ներկայութեանը բռնեց մօռնողին ձեռքէն և ըսաւ .  
«Աղջի՛կս, քեզի՛ կ'ըսեմ, ելի՛ր » :

12. Անմիջապէս ողջնցաւ աղջիկը ու կը քալէր,  
տաններկու տարեկան էր անիկայ :  
Իո՛րոք ժողովուրդը սքանչացաւ այս հրաշքին վրայ :

13. Յիսուս ըսաւ. «Ուտելիք տուէք աղջկանը և  
մի՛ զրուցէք այս եղած բաները » :



### Գ Լ Ո Ւ Յ Ի Է .

#### Յովհաննէս Մկրտիչի մահը

1. Հերովդէսի համանուն որդին բանտարիւր էր  
Յովհաննէսը, վասն զի անիկայ յանդիմաներ էր իր  
օրինազանցութիւնը :

Հերովդէս՝ իր ողջ եղբօրը Փիլիպպոսին կնիկ՝ Հե-  
րովդիան իրեն կին ըրած էր և այս բանը օրէնքին  
դէմ էր :

2. Հերովդէս կ'ուզէր սպաննել Յովհաննէսը բայց  
ժողովուրդէն կը վախնար. վասնզի ժողովուրդը՝ մար-  
գարէ կը ճանչնար Յովհաննէսը :

3. Տարի մ'էր անցեր բանտարկութեանը վրայ,  
երբ Հերովդէսին ծննդեան տարեդարձի օրն եկաւ :

Հանդէսի սրահին մէջ՝ Հերովդիային աղջիկը սկը-  
սաւ խաղալ : Հերովդէսի աչքին շատ հաճելի երևցաւ  
այդ խաղուպարը, ուստի և ըսաւ իր կնոջ աղջկան .  
« Ի՛նչ որ ուզես, անպատճառ պիտի շնորհեմ քեզի » :

4. Աղջիկը գնաց, մօրմէն խրատուեցաւ ու եկաւ  
ըսաւ իր հայրագրին . «Յովհաննէս Մկրտիչին գլուխը  
ինձի տո՛ւր ափսէի մը վրան դրուած » :

5. Հերովդէս իբր թէ տրտմեցաւ, բայց նստողնե-  
րուն ներկայութեանը իր խօսքը յարգելու համար՝  
հրաման ըրաւ որ տրուի աղջկան ուզածը :

6. Մարդ գնաց բանտը, Հերովդէսին հրամանով,  
Յովհաննէսին գլուխը կտրեց ու ափսէի մը վրան դնե-  
լով՝ բերաւ Հերովդիային որ տարաւ իր ամբարիշտ  
մօրը պարգևեց :

7. Յովհաննէսին աշակերտները գացին և իրենց  
վարդապետին մարմինը վերցնելով թաղեցին ու եկան  
Տէր Յիսուսին պատմեցին :





### Գ Լ ՈՒ Խ Ի Ը .

#### Յիսուս հիմեցնազար մառդիկ կը կերակրէ

1. Յովհաննէս Մկրտիչի զլիսատութենէն քիչ առաջ, Յիսուս տասներկու առաքեալները քարոզութեան զրկած էր: Անոնք, բացի Սամարիայէն, ամէն կողմ պտտած և ժողովուրդը ապաշխարութեան յորդորած էին:

2. Առաքեալները հիմակ վերադարձան իրեն քով և անոր պատմեցին իրենց գործած բժշկութիւնները և քարոզները: Յիսուս ըսաւ անոնց. « Եկէ՛ք երթանք անապատ տեղ մը ու հանգչինք քիչ մը. » վասն զի ժողովուրդը միշտ իրենց քով կուգար, անանկ որ հաց ուտելու անգամ ժամանակ չէին թողուր:

3. Նաւը մտնելով առանձնացան անապատ տեղ մը սակայն ժողովուրդը տեսնելով անոնց երթալը, բոլոր քաղաքներէն ոտքով գացին անոնց քով և մեծ բազմութիւն մը եղան հոն:

4. Յիսուս տեսաւ ժողովուրդին բազմութիւնը, կարեկցեցաւ անոնց վրայ. վասն զի կը նմանէին անոնք ոչխարներու հօտին, որոնք հովիւի պաշտպանութենէ զուրկ էին:

5. Յիսուս սկսաւ ընդարձակ քարոզութեան մը. ժամերը կ'անցնէին և ժողովուրդը անոր շնորհալի խօսքերուն մտիկ ընելու զբաղած, մոռցեր էր օրին յառաջանալը:

6. Աշակերտները Յիսուսին մօտեցան ու ըսին. « Տէր՛, հոս անապատ է և մինչդեռ օրը գլորած չէ, ժողովուրդը թո՛ղ տուր որպէս զի երթան շրջակայ ազարակներն ու գեղերը և իրենց ուտելիքը գնեն: »

7. Յիսուս ըսաւ անոնց. « Դուք տուէ՛ք ատոնց ուտելիքը »: Փիլիպպոս առաքեալն ըսաւ « Տէ՛ր, երկու հարիւր դահեկանի հացը հերիք չէ որպէս զի ատոնցմէ ամէն մէկը քիչ մը առնէ »:

8. Յիսուս ըսաւ անոնց. « Քանի՞ նկանակ ունիք,



նայեցէք անգամ մը: » Անդրէաս առաքեալը պատասխանեց. « Հոս տղայ մը կայ որ հինգ գարիէ նկանակ ու երկու ձուկ ունի »:

9. Յիսուս հրաման ըրաւ, և բոլոր ժողովուրդը յիսունական կամ հարիւրական հօգինոց խմբերու բաժնուելով՝ կանաչ խոտին վրայ նստեցաւ:



10. Յիսուս ձեռքն առաւ հինգ նկանակներն ու երկու ձուկերը, երկինքը նայեցաւ, օրհնեց, փչեց հացերը ու մանրեց ձուկերը և աշակերտներուն տուաւ, որոնք բաշխեցին բոլոր խումբերուն:

11. Բոլոր ժողովուրդը կերաւ կշտացաւ: Յիսուսի հրամանով սեղաններու կտորուանքը ժողվեցին, որոնք տասներկու սակառ լեցուցին:

12. Ժողովուրդը հինգ հազար մարդէ կը բաղկանար, տղաքներէ և կնիկներէ զատ: Ժողովուրդը ըզզաց ու կ'ըսէր, ասիկայ է ճշմարիտ մարգարէն և մինչև անգամ մտածեց թագաւոր հռչակել զանիկա. բայց Յիսուս լեռը քաշուեցաւ աղօթք ընելու:

Գ Լ ՈՒ Խ Ի Թ.

Կենաց հացը

1. Կափառնառուի ժողովարանին մէջ, վերի դէպքէն մէկ երկու օր վերջը ժողովուրդը հաւաքուեր էր ու հարցուց Յիսուսի. «Ռաբբի՛, ե՞րբ եկար հոս»:

2. Յիսուս ըսաւ. «Դուք զիս հոգեւոր բաներու համար չէ՛ որ կը փնտոէք, հապա այն հացին համար զոր ձեզի շտացուցի ու կերաք ու կշտացաք: Գացէ՛ք գործեցէք, չէ՛ թէ կորստական կերակուրին համար հապա ա՛յն կերակուրին համար, որ յաւիտենական

կեանքի մէջ կը մնայ և զոր Մարգուհն Որդին պիտի տայ ձեզի»:

3. Հսին անոր. «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործը գործենք»:

Պատասխան տուաւ Յիսուս. «Ա՛ս է Աստուծոյ գործը, որ դուք հաւատաք անոր Առաքեալին (ինծի)»:

4. Հսին անոր. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որ տեսնենք ու հաւատանք՝ ինչպէս որ գրուած է երկինքէն հաց տուաւ որ ուտեն, և մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան»:

5. Յիսուս ըսաւ. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. չէ՛ թէ Մովսէսն էր որ ձեզի երկինքի հացը տուաւ հապա Հայրս ձեզի պիտի տայ երկինքի ճշմարիտ հացը: Վասնզի հացը Աստուծմէ է, որ երկինքէն կ'իջնէ և կեանք կուտայ աշխարհի»:

6. Հսին անոր. «Տէ՛ր, ամէն ատեն այն հացը մեզի տուր:» Յիսուս ըսաւ. «ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՅԸ» «Ո՛վ որ ինծի հաւատայ, բնաւ երբեք չպիտի ծառանայ և ո՛վ որ ինծի կուգայ չպիտի անօթենայ»:

7. Տրտնջել սկսաւ ժողովուրդը՝ թէ «Երկինքէն իջած հացը ես եմ կ'ըսէ»: Կ'ըսէին. «Ասիկա Յիսուսը չէ՛, Յովսէփին զաւակը, որուն ծնողքը մենք կը ճանչնանք, ի՞նչպէս կ'ըսէ թէ ես երկինքէն իջայ»:

8. Յիսուս ըսաւ. «Մի՛ լիճիք իրարու հետ. ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՅԸ, Ձեր հայրերը անապատին մէջ մանանան կերան ու մեռան: Ա՛ս է այն հացը, որ երկինքէն իջած է և ո՛վ որ այս հացէն ուտէ չպիտի մեռնի»:



9. « Ես եմ կենդանի հացը, որ երկինքէն իջայ. ո՛վ որ ուտէ այս հացէն, պիտի ապրի յաւիտեան և այն հացը, զոր ես պիտի տամ, իՄ ՄԱՐՄԻՆՍ է » :

10. Քանի մը մարդիկ նորէն արանջեցին թէ. « Ինտո՞ր կրնայ այս մարդը իր մարմինը տալ, որ ուտուի » :

Յիսուս ըսաւ անոնց. « Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. թէ որ չուտէք մարդուն Որդիին ՄԱՐՄԻՆՆԸ և չխմէք անոր ԱՐԻԻՆՆԸ, կեանք չունիք ձեր անձերուն մէջը » :



## Գ Լ Ո Ւ Խ Լ .

### Յիսուսի պայծառակերպութիւնը


1. Յիսուս կեսարիա Փիլիպպեան ըսուած քաղքին կողմերը պտտած առեն աշակերտներուն հարցուց թէ. « Դուք ո՞վ կը կարծէք զիս ». Պետրոս առաքեալը պատասխանեց. « Դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին » :

2. Յիսուս ըսաւ. « Երնէ՛կ քեզի, Սիմոն. ինչու որ իմ երկնաւոր Հայրս քեզի յայտնեց այդ ճշմարտութիւնը, ես քեզի կ'ըսեմ թէ դուն վէ՛մ ես և այդ վէ՛մին վրայ պիտի շինեմ եկեղեցիս, ու ո՛չ մէկ զօրութիւն զանիկա պիտի կրնայ յաղթել » :

3. Պատուիրեց սահայն աշակերտներուն, որ

մէկու մը չըսեն թէ Քրիստոսն է ինքը, և սկսաւ հասկցնել թէ. « Ինք պէտք է որ Երուսաղէ՛մ երթայ, շատ չարչարանքներ կրէ, ծերերէն՝ դպիրներէն ու քահանայապետներէն սպանուի ու երրորդ օրը յարութիւն առնէ » :

4. Այս խօսակցութենէն վեց օր վերջը, Յիսուս



հետն առաւ Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը եւ զանոնք բարձր լեռ մը հանեց (Թափոր) առանձինն աղօթք ընելու :

5. Աղօթած ժամանակը, երեսին տեսքը այլա-  
52. ՆՈՐ ՈՒՅԻ 5



կերպեցաւ և իր զգեստները լոյսի պէս ձերմակ ու փայլուն եղան :

Մովսէս ու Եղիա մարգարէները երեցան փառքով որոնք կը խօսէին Յիսուսի մահուան վրայ, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր :

Գ. Պետրոս ու միւս երկուքը քնաթաթախ էին և երբ արթննալով տեսան Յիսուսի փառքը, Մովսէսն ու Եղիան ալ երկու քովը կեցած, որոնք պիտի բաժնուէին՝ Պետրոս ըսաւ. « Տէ՛ր, աղէկ է որ հոս կենանք ու երեք տաղաւար շինենք. մէկը քեզի, մէկը Մովսէսին ու միւսը Եղիային », վասն զի վախուն չէր գիտեր թէ ի՞նչ կը խօսէր :

Ծ. Լուսաւոր ամպ մը եկաւ, նոյն միջոցին և անոնց վրայ հովանի եղաւ ու ամպէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. « Ասիկա է իմ սիրելի որդիս, որուն հաւնե՛ր եմ. ատոր մտիկ ըրէ՛ք » :

Տ. Աշակերտները ձայնը լսելով երեսի վրայ ինկան. Յիսուս մօտենալով՝ անոնց դպաւ ու ըսաւ. « Ելէ՛ք, մի՛ վախնաք » :

Աչքերնին բացին անոնք ու տեսան մինակ Յիսուսը որ ըսաւ իրենց. « Աստուծոյ վրայ մարդու չգրուցէք մինչև որ Մարդուն Որդին մեռելներէն յարութիւն առնէ » :

(Հայոց Ս. եկեղեցին ամէն տարի Յուլիս ամսուն մէջ կը տօնէ մեծ հանդէսով Յիսուսի Պայծառակերպութեան Տօնը, Եկեղեցիին հինգ Տաղաւարներէն մէկն է այդ տօնը և կը կոչուի Վարդավառ : Այդ առիթով կ'երգուի « Որ ի լերինն այլակերպեալ » շարականը ) :

### Գ Լ Ո Ւ Խ Լ Ա .

## Յիսուս Գործն Երուսաղէմ կ'երթայ ու կը դառնայ Գալիլիա

1. Յիսուս Տաղաւարահարի Տօնին Երուսաղէմ գնաց, ուր օրեր առաջ Հրէաները իրարու հետ կը վիճարանէին թէ արդեօք ո՞ւր է անիկա :

Այդ վիճարանութիւնները զաղտուկ կը խօսէին՝ իշխաններէն վախնալով :

2. Երբ տօնը ընդմիջեցաւ, Յիսուս Տաճարն ելաւ և սկսաւ սորվեցնել : Ամէնքը կը զարմանային ու կ'ըսէին « Ի՞նչպէս ասիկայ գիրքերը զիտէ քանի որ ուսում բնաւ առած չէ » :

3. Շատ մարդիկ հաւատացին անոր ու կ'ըսէին « Մեսիան երբոր գայ այս նշաններէն աւելի՞ն պիտի ընէ որչափ որ ասիկա կ'ընէ » :

Փարիսեցիները լսեցին այս չնկոյցը ու քահանայապետներուն միացած՝ սպասաւորներ զրկեցին որ զանիկա բռնեն :

4. Տօնին վերջին օրն էր. Յիսուս կայներ էր տաճարին մէջ, կ'աղաղակէր ու կ'ըսէր. « Թէ որ մէկը ծարաւ է, թող ինձի գայ և ինչպէս որ գիրքը կ'ըսէ. անոր որովայնէն կենդանի ջուրի գետեր պիտի զրխին » :

5. Ժողովուրդին մէջ Յիսուսի մասին վէճը աւելի սաստկացաւ. հակառակորդ մասը ուզեց բռնել զայն, բայց մէկը ձեռք չզարկաւ :



6. Քահանայապետներուն սպասաւորները ետ դարձան ու ըսին. « Մենք չբռնեցինք ատ մարդը վասն զի երբեք մէկը ատ մարդուն պէս խօսած չէ » :

7. Ծնացած կին մը բերին Յիսուսի որպէս զի դատէ. Անիկա ըսաւ. « Ձեր մէջէն անմեղ եղողը առաջին քարը թող զարնէ՛ աս կնկանը » : Եւ երբ դուրս ելան ամենքը, ինք ալ ըսաւ կնոջը. « Գնա՛ ու մեղքէ հեռու կեցիր » :

8. Փարիսեցիներու նախանձարեկ ոգին առիթ կը փնտռէր Յիսուսի մէկ սխալը գտնելու. Յիսուս ըսաւ ուրիշ օրերու քարոզներէ մէկուն մէջ. « Ես եմ աշխարհի լոյսը » . եւ դարձեալ թէ « Ձիւս ձեր մէջէն ո՞վ կրնայ յանդիմանել մեղքի համար » :

9. Է՛ն ետքը յայտարարեց իր յաւիտենականութիւնը ըսելով. « Ճշմարի՛տ ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի. Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես » : Այս խօսքին չկրցան հանդուրժել Փարիսեցիները ու քարեր վեր առին քարկոծելու զանիկա. քանզի իրենք գոռոզ էին ու չէին ուզեր խոնարհութեամբ ճշմարտութիւնը սորվիլ :

10. Յիսուս ելաւ տաճարէն ու գնաց, և ահա տեսաւ ճամբուն վրայ կոյր մարդ մը որ ծնելէն ի վեր կոյր էր : Աշակերտները հարցուցին թէ ինչո՞ւ այս մարդը կոյր ծնած է :

11. Յիսուս ըսաւ. « Ո՛չ ատիկայ, և ո՛չ ալ ծընողքը մեղք մը չունին, որուն համար կոյր ծնած ըլլար, հապա որպէս զի Աստուծոյ գործերը այնչափ զլան ատոր վրայ : »

« Քանի որ աշխարհի մէջ եմ աշխարհի լոյսն եմ » :

12. Այս խօսքէն վերջը գետինը թքաւ, թուքովը կաւ շինեց ու այդ կաւը կոյրին աչքերուն վրայ ծեփեց ու ըսաւ. « Գնա՛, Սելովամի աւազանին մէջ լուացուէ » :

13. Կոյրը գնաց լուացուեցաւ և անոր աչքերը բացուեցան ու կը տեսնէր :

Մեծ յուզում առաջ եկաւ այս նշանաւոր բժշկութեան հրաշքէն և ի զո՞ւր վիճաբանութիւններ ըրին Փարիսեցիներ, ի զո՞ւր ուզեցին անոնք վարագուրել իրողութեան ճշտութիւնը :

Ամբողջ ժողովուրդը շօշափելի կերպով կը տեսնէր Անոր ինքնիշխան զօրութեան սքանչելիքներ գործելը :

14. Յիսուս կոյրին սորվեցնելէ ետքը սաճմարտութիւնը թէ ինքն է Մեսիան և անոր երկրպագութիւնը ընդունելէ վերջը, դարձաւ Գալիլիա :



### Գ Լ Ո Ի Խ Լ Բ .

#### Յիսուսի վերջին գործերն Գալիլիայի մէջ

1. Յիսուս որչափ որ Գալիլիա դարձաւ, ա՛լ հոն շատ կենալ չուզեց. մօտեցեր էր իր չարչարանքին օրերը, ուստի հաստատ օրօշեց Երուսաղէմ վերադառնալ :

2. Յիսուս 12 էն զատ եօթանասուն աշակերտ ալ ընտրեց և զանոնք իր առջևէն երկերկու զրկեց



այն բոլոր քաղաքներն ու գիւղերը ուր որ ինքը պիտի երթար հետզհետէ . մինչդեռ տասներկու քնները շրկած էր նախապէս այն քաղաքները ուր ինք չէր հանդիպած :

3. Յիսուս ըսաւ եօթանասուն աշակերտներուն . « Ես ձեզ կը ղրկեմ իրրև գառներ գայլերու մէջ . բժշկեցէ՛ք հիւանդները ու ըսէ՛ք ամենուն թէ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցեր է » :

4. « Ձեզ մերժող քաղաքէն ելլելով՝ «Ա՛ն փոշին որ ձեր քաղաքէն մեր ոտքին փակած է ձեզի կը թօթվենք » ըսէ՛ք ու ելէ՛ք . ձեզի կ'ըսեմ որ Սոդոմին դատաստանը դիւրագոյն պիտի ըլլայ քան այդ կարգի քաղաքին » :

5. Դառնալով Գալիլիայի այն քաղաքներուն ուր երեք տարիներ էին որ կը քարոզէր, ըսաւ Յիսուս « Վա՛յ քեզ , Բոշազին , վա՛յ քեզ , Բեթսայիթա , վասն զի թէ որ Տիւրոսի և Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջը եղան , շատոնց քուրճով ու մոխրի մէջ նստած ապաշխարած պիտի ըլլային » :

6. « Դատաստանին օրը Տիւրոսին ու Սիդոնին աւելի դիւրին պիտի ըլլայ քան թէ ձեզի » :  
« Ու դուն կափառնառում , որ մինչև երկինքը բարձրացած ես , մինչև դժոխքը պիտի իջնես » :

7. Ըսաւ եօթանասուններուն . « Ան որ ձեզի մտիկ կ'ընէ , ինծի մտիկ կ'ընէ և ան որ ձեզ կը մերժէ , զիս կը մերժէ և ան որ զիս կը մերժէ , զիս զրկող Հայրը կը մերժէ » :

8. Գացին և ժամանակ մը ետքը վերադարձան

եօթանասուն աշակերտները ուրախութեամբ և ըսին անոր . « Տէ՛ր , քու անունովդ չար ոգիներն ալ մեզի կը հնազանդին » :

Յիսուս ըսաւ . « Ատոր համար մի՛ ուրախանաք , հասկա ուրախացէ՛ք որ ձեր անունները երկինքը գըրուած են » :

9. Նոյն ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ ու ըսաւ . « Կը գոհանամ քեզմէ , ո՛վ Հայր . Տէր երկինքի ու երկրի որ աս բաները ծածուկ պահեցիր ( աշխարհի ) իմաստուններէն ու գիտուններէն ու յայտնեցիր տըղաքներուն Այո՛ , ո՛վ Հայր , վասն զի քու աչքիդ ասանկ հաճելի եղաւ : Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս ու մէկը չի գիտեր թէ ո՛վ է Որդին , բայց միայն Հայրը և թէ ո՛վ է Հայրը , բայց միայն Որդին , և ա՛ն՝ որուն որ Որդին կուզէ յայտնել » :

Գ Լ Ո Ւ Խ Լ Գ .

Յիսուս կը հուշակէ թէ ամէն մարդիկ իրարու եղբայր են

1. Յիսուս նոր վերջացուցեր էր իր խօսքը երբ օրինական մը ( Դպիր ) զանիկա փորձելով ըսաւ . « Վարդապետ , ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ » :

2. Յիսուս ըսաւ . « Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է » :



Օրինականը պատասխանեց « Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ , քու բոլոր անձովդ , քու բոլոր զօրութիւնովդ ու բոլոր միտքովդ » :

«Եւ պիտի սիրես քու ընկերդ ալ քու անձիդ պէս»:

3. Յիսուս ըսաւ. « Նիտակ պատասխան տուիր, ատիկա զործադրէ՛ և պիտի ապրիս » :

Օրինականը ըսաւ. « Բայց իմ ընկերս ո՞վ է ».

4. Յիսուս պատասխանեց ու ըսաւ.

« Մարդ մը նրասաղէմէն ներիքով կ'իջնէր ու



աւազակներու ձեռքը ինկաւ , որոնք մերկացուցին զանիկա , վիրաւորեցին ու կիսամեռ թողուցին գացին»:

5. « Պատահեցաւ որ քահանայ մը ան ճամբէն կ'իջնէր ու զանիկա տեսնելով անդիի կողմէն անցաւ : Նոյնպէս ալ Ղևտացի մը ան տեղը հասնելով՝ գնաց ու տեսաւ և անդիի կողմէն անցաւ » :

6. « Բայց Սամարացի մը , որ ճամբորդութիւն կ'ընէր , եկաւ անոր քով ու զանիկա տեսնելով խղճաց . մօտեցաւ , անոր վէրքերը փաթթեց՝ վրան ձէթ ու գինի ղնելով : Իր գրաստին վրայ դրած տարաւ պանդոկ մը ու անոր հոգ տարաւ » :

7. Հետեւեալ օրը երբ կ'ելլէր անկէ , երկու դահեկան հանեց , պանդոկապետին տուաւ ու ըսաւ « Հոգ տար ատոր ու ինչ որ աւելի ծախք ըննս , ետ դառնալուս պիտի վճարեմ » :

8. « Հիմակ այս երեքէն ո՞րը քեզի կ'երևայ թէ ընկեր եղաւ աւազակներու ձեռք իյնողին » . օրինականը ըսաւ. « Ա՛ն որ ողորմութիւն ըրաւ » : Յիսուս ըսաւ անոր. « Գնա՛ , դուն ալ անանկ ըրէ՛ » :

9. ( Իսրայէլի ազգին ու Սամարացիներուն մէջ դարաւոր ատելութիւն կար և սաստիկ խտրականութիւն կը տիրէր անոնց մէջ , բայց Յիսուս բարի Սամարացիին այս առակովը կը սովորեցնէ թէ մարդիկ առ հասարակ իրար պէտք է սիրեն ) :

Գ Լ Ո Ի Խ Լ Դ .

Յիսուս Ղազարոսը կ'ողջնցնէ մեռելներէն

1. Չմեռը նաւակատիքի տօնին , Յիսուս հասաւ նրուսաղէմ և հոն տաճարին մէջ կը սորվեցնէր երբ հռչակեց սա ճշմարտութիւնը թէ « Ես ու Հայրը մէկ ենք ( հաւասար ) » :



Ան ատենը հրէաները ուզեցին զինքը սպաննել :

2. Յիսուս ըսաւ . « Թէ որ հօրս գործերը չեմ գործեր, ինձի մի՛ հաւատաք . հապա թէ որ կը գործեմ թէեւ ինձի չէք հաւատար, գոնէ գործքերուս հաւատացէ՛ք , որ գիտնաք ու հաւատաք թէ Հայրը իմ մէջս է ու ես Անոր մէջ » :

3. Շատեր հաւտացին Անոր ու իրեն հետեցան մինչ ինք Երուսաղէմէն ելլելով Յորդանանի անդիի կողմը քաշուեցաւ :

4. Յիսուսի բարեկամը՝ Ղազարոս՝ ծանր հիւանդ էր ուստի և Ղազարոսին քոյրերը՝ Մարիամ ու Մարթա Յիսուսի մարդ շրկեցին թէ . « Քու սիրելին հիւանդացեր է » :

5. Յիսուս ըսաւ . « Այդ հիւանդութիւնը մահուան համար չէ, հապա Աստուծոյ Որդիին փառքին համար է » : Եւ երկու օր կենալէ վերջը, ըսաւ աշակերտներուն . « Եկէ՛ք, երթանք Հրէաստան, քանզի Ղազարոս բարեկամս մեռած է և ես ուրախ եմ որ հոն չէի, որպէս զի դուք հաւատաք » :

6. Չորս օրուան թաղուած էր երբ Յիսուս հասաւ անոնց գեղը, որ Բեթանիա կ'ըսուէր : Մարթան վազեց Յիսուսին առջևն ու ըսաւ . « Տէր, թէ որ դուն հոս եղած ըլլայիր, եղբայրս չէր մեռներ » : Յիսուս ըսաւ Մարթային, « Եղբայրդ յարութիւն պիտի առնէ » :

7. Մարթա պատասխանեց . « Տէ՛ր գիտեմ որ անիկա աշխարհի վերջին օրը յարութիւն պիտի առնէ » : Յիսուս ըսաւ « ԵՍ ԻՍԿ ԵՄ ԵԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ

ԿԵԱՆՔԸ, ա՛ն որ ինձի կը հաւատայ, թէպէտ եւ մեռնի ալ՝ պիտի ապրի. ու ա՛ն ամենը, որ կենդանի են ու ինձի կը հաւատան, չպիտի մեռնին. դուն կը հաւատաս՞ աս խօսքին » :

8. Մարթան ըսաւ . « Տէ՛ր, ես հաւատացեր եմ որ դուն ես Մեսիան (Քրիստոսը), Աստուծոյ որդին » : Մարթա գնաց ու քոյրը շրկեց Յիսուսին, որ տալաւ Մարթային հանդիպած տեղը կեցեր էր :

9. Մարիամ ալ մի եւ նոյն խօսքը կրկնեց ինչ որ ըսեր էր իր քոյրը : Յիսուս տեսաւ որ կուլար Մարիամ ու բոլորանոր հետ տունէն եկողները կուլային. իր հօգիին մէջ խռովեցաւ, հառաչեց ու ըսաւ . « Ո՞րք թաղեր էք զանիկա » :

10. Ըսին անոր . « Տէ՛ր, Եկո՛ւր ու տես » : Ու Յիսուս լացաւ :

11. Հրէաները կ'ըսէին . « Տեսէ՛ք, որչա՛փ կը սիրէր զանիկա » . իսկ մէկ քանիները կ'ըսէին . « Կոյրին աչքերը բացաւ ու չէ՞ր կրնար այնպէս ընել որ ստիկա չմեռնէր » :

12. Յիսուս իր միտքով զայրացած այդ նախանձոտ խօսքերուն, եկաւ գերեզմանը եւ կափարիչը վերցընել տալով՝ իր աչքերը երկինք վերցուց ու ըսաւ . « Հա՛յր, շնորհակալ եմ քեզմէ, որ ինձի լսեցիր եւ գիտէի որ ամէն ատեն ինձի կը լսես . բոլոր կայնող ժողովուրդին համար կը գործեմ, որպէս զի հաւատան թէ Դուն զիս շրկեցիր » :

13. Աղօթքէն ետքը ամուր ձայնով մը պօռաց . « Ղազարէ՛, ելի՛ր, դուրս եկո՛ւր » :



Ու Ղազարոս մեռելութենէ կեանքի դարձաւ ու դուրս եկաւ : Անոր ձեռքերն ու ոտքերը երիզներով պնդած էին ու քիթն եւ բերանը վարչամակով փաթած :

Յիսուս հրաման ըրաւ ու քակեցին անոր կապերը :

14. Հրէաներէն շատեր, որոնք մտիթարանքի եկած էին, հաւատացին Յիսուսի աստուածային զօրութեանը, իսկ մէկ քանի նախանձոտներ դացին ու փարիսեցիներուն պատմեցին :



### Գ Լ Ո Ւ Խ Լ Ե .

## Կայիափա քահանայապետը եւ Հրէաներու ծերակոյտը

1. Ղազարոսի յարութեան լուրը ապշեցուց նախանձարեկ փարիսեցիները, որոնք գումարել տուին ազգին ծերակոյտը . ամէնքն ալ կ'ըսէին . « Ինչ ընենք, այն մարդը շատ հրաշքներ կը գործէ » :

2. Ամէնքն ալ կ'ըսէին . « Եթէ երեսի վրայ ձգենք այս խնդիրը, ամէնքն ալ պիտի հետեւին Յիսուսին եւ մեր ցեղային բարքերը պիտի թուլնան անոր քարոզներովը եւ Հոովմ պիտի ջնջէ մեր ազգութիւնը » :

(Կեղծաւորնե՛ր . փոխանակ խոնարհ հոգիով քըններու անոր գործած սքանչելիքները՝ գրողաբար

կ'ուզէին կասեցնել աւետարանին քարոզութիւնը . կուզէին Աստուծոյ ծրագիրը ջնջել : Կեանքի եւ մահուան Տէրը ինքնին եկեր էր թշուառներուն երջանկութիւն բերելու . իսկ իրենք պիտի ջանային շարութիւնը մշտնջենաւորել՝ ազգութիւն անունին տակ ) :


3. Կայիափա կը կոչուէր քահանայապետը՝ որ 70 ձերերէ բաղկացած Գերագոյն այդ ժողովին նախագահն էր . անիկայ ելաւ ու ըսաւ ամէնուն . « Դուք չէք գիտեր ո՛չ իսկ խորհրդածել . լաւ է որ ժողովըրդեան համար մարդ մը մեռնի ու մեր ցեղը չի վրտանաւորի, չկորսուի » :

4. Կայիափայի այս խօսքը իր մասնական իմաստովը դէմ էր արդարութեան, սակայն ամենակարողն Աստուած, որ քարերէն Աբրահամին զաւակներ կը յարուցանէ, այդ շար քահանայապետին բերանը դրաւ այնպիսի խօսք մը որ ճշդիւ մարգարէութիւն էր իր լայն իմաստովը :

— Իրօք Յիսուս պիտի մեռնէր բոլոր մարդկային ազգին հոգեւոր ազատութեանը համար : —

5. Որոշ կերպով ծերակոյտն ալ վճռեց թէ Յիսուսը պէտք է սպաննել : Զատիկի տօնը մօտ էր եւ ատեանը պատուէր տուաւ շատերուն որպէս զի Յիսուսի ո՞ւր ըլլալը իմաց տան որ բռնեն :

6. Յիսուս ա՛լ յայտնի չէր պտտէր Հրէաստան, ապա գնաց անապատին մօտ տեղ մը՝ Եփրայիմ ըսուած քաղաքը, ուր կեցաւ աշակերտներով միասին :





### Գ Լ ՈՒՒ Լ Զ.

#### Յիսուսի ուրիշ մէկ ֆանի առակները

1. Եփրայիմէն մեկնեցաւ Յիսուս Երուսաղէմ երթալու, մաքսաւոր ու մեղաւոր մարդիկ շատ աւելի կը համակրէին ու կը մօտենային լսելու անոր կենարար խօսքերը:

2. Փարիսեցիները կը գայթակղէին ու կ'ըսէին. « Աս մարդը մեղաւորները կ'ընդունի ու անոնց հետ կուտէ ու կը խմէ »:

3. Յիսուս՝ խօսքը ուղղելով փարիսեցիներուն ըսաւ սա առակը. « Զեզմէ ո՞վ է ան մարդը որ հարիւր ոչխար կ'ունենայ ու անոնցմէ մէկը որ կորսնցնէ՝ իննսուն և ինը չի թողո՞ւր ու կորսուածին ետեւէն երթար մինչև որ զանիկայ գտնէ: »

4. « Ու երբոր գտնէ կորսուածը, ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ ու տուն կը բերէ. կանչելով իր դրացիներն ու բարեկամները՝ կ'ըսէ անոնց. ուրախ եղէ՞ք ինծի հետ վասն զի կորուսած ոչխարս գտայ »:

5. « Կ'ըսեմ ձեզի. այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորին համար որ կ'ապաշխարէ՝ քան թէ իննսուն եւ ինը արդարներուն համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ »:

6. Յիսուս ըսաւ. « Մարդ մը երկու զաւակ ու-

նէր. երկուքէն պզտիկը ըսաւ իր հօրը. — Հա՛յր, ստացուած քէշը ինծի իյնալիք բաժինը տուր. Ան ալ բաժնեց իր ունեցածը երկուքին: Շատ օր չանցած՝ պզտիկ զաւակը ժողովեց իր բաժնին ինկած ամէն բան ու հետու երկիր մը գնաց:

7. « Հոն անառակութեամբ ապրելով՝ իր ունեցածը փճացուց: Ունեցածը հատնելէ վերջը ան տեղերը պատահած սաստիկ սովուն ատենը թշուառանալով՝ գնաց ան երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ ծառայութեան, որ զինքը ագարակը ղրկեց խոզ արածելու: »

8. « Հոն կը փափաքէր անիկա խոզերուն կերած հունձէն ուտելու, ու մէկը չէր տար անոր: Օր մը մտածեց ու ըսաւ. — Որչա՛փ բանւորներ կան հիմակ հօրս տունը, որոնք կուշտ ու կուռ հաց կուտեն մինչդեռ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ, երթամ հօրս ու ըսեմ անոր. Հա՛յր, քեզի ու Աստուծոյ դէմ մեղանչեցի, արժանի չեմ ա՛լ որդիդ ըսուելու, զիս վարձկաններէդ մէկին պէս ըրէ »:

9. « Ելաւ իր Հօրը եկաւ. Հայրը հետուէն նըշմարելով իր Անառակ Որդիին դառնալը՝ վաղեց առաջը, ինկաւ անոր վիզը և համբուրեց: Որդին ըսաւ. — Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ և քեզի դէմ. ա՛լ արժանի չեմ որդիդ կոչուելու: »

10. « Հայրը պատուհրեց ծառաներուն, որոնք առջի զգեստները բերին հագցուցին. մատնին դրին մատը, գէր գուարակը մորթեցին. « Վասնզի կ'ըսէր Հայրը. — աս որդիս մեռած էր ողջնցաւ, պէտք է ուտենք խմենք և ուրախ ըլլանք »:



**11.** «Մեծ Որդին տունը չէր. երբ եկաւ և տունին մէջի ցնծութիւնները լսեց, խոժոռեցաւ իր Հօրը թէ ինչո՞ւ ստացուածքներդ փճացնող զաւկիդ



գալուն համար ասանկ ուրախութիւններ ընել կուտաս » :

**12.** Հայրը ըսաւ. — « Պէտք էր այս ուրախութիւնը և խնդութիւնը վասնդի աս քու եղբայրդ կորսուած էր և գտնուեցաւ. մեռած էր և ողջընցաւ » :



### Գ Լ Ո Ւ Ն Լ Է .

Յիսուս կ'օրհնէր սղախները, կը հրաւիրէ յոգնածները

**1.** Բարեպաշտ ծնողքներ բերին իրենց զաւակները, որպէսզի Տէր Յիսուս զանոնք օրհնէ: Առաքեալ-



ները զանոնք կը հեռացնէին որպէս զի նեղութիւն չըլլայ վարդապետին :



2. Յիսուս յանդիմանեց իր աշակերտներն ու ըսաւ. «Թո՛ղ տուէք այդ մանր տղոցը որ ինծի գտն, ու մի՛ արգիլէք զանոնք, քանզի ատոնց է Աստուծոյ թագաւորութիւնը » :

3. Յիսուս ըսաւ. « Ընձարիտ կ'ըսեմ ձեզի. ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ չպիտի մտնէ անոր մէջ » :

Զայս ըսելէ վերջը, գիրկն առաւ այդ տղաքը, ձեռքը վրանին զրաւ ու օրհնեց զանոնք :

4. Անգամ մ'ալ առաքեալները Տէր Յիսուսի ըսին. «Տէր, ո՛վ է մեծը երկինքի թագաւորութեանը մէջ » : Յիսուս՝ տղայ մը կանչեց իրեն ու զանիկայ աշակերտներուն մէջ կայնեցնելով ըսաւ. « Ընձարիտ կ'ըսեմ ձեզի. թէ որ զարձի չգաք ու տղոց պէս չըլլաք՝ երկինքի թագաւորութիւնը բնաւ չպիտի մտնէք » :

« Ո՛վ որ իր անձը այս տղուն պէս խոնարհեցնէ, անիկա է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ » :

5. Ուրիշ օր մը ըսաւ Յիսուս. « Եկէ՛ք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ և ես ձեզ պիտի հանգչեցնեմ : Ի՛մ լուծս ձեր վրայ առէ՛ք ու ինձմէ սորվեցէ՛ք՝ որ հեզ եմ և խոնարհ սրտով, և ձեր անձերուն հանդիսը պիտի գտնէք : Վասնզի ի՛մ լուծս քաղցր է ու բեռս ալ թեթեւ » :



### Գ Լ ՈՒ Խ Լ Ը .

#### Յիսուս յաղթանակով Երուսաղէմ կը մտնէ

1. Յիսուս Զատիկէն (Պասէք) վեց օր առաջ հասաւ Բեթանիա, ուր կը բնակէին իր բարեկամները՝ Դաղար, Մարիամ ու Մարթա :

Երիքովէն անցած ժամանակ, երկու կոյրեր բժշկեց. շատ մը ուրիշ հիւանդներ ալ բժշկեց անցած անդերը : Մաքսաւոր Զաքէոսին, որ կարճիկ մարդ էր, այցելութիւն մը տուաւ ուր ատիթ ունեցաւ խօսելու իր շնորհալի խօսքերը :

2. Յաջորդ օրը ճամբայ ելլելով դէպի Երուսաղէմ՝ հասաւ Բեթֆազէ՝ դէպի Զիթենիներու լեռը, երկու աշակերտներ զրկեց ըսելով. « Գացէք դէմի գեղը և հոն պիտի գտնէք կապուած էջ մը և աւանակն ալ հետը. երկուքն ալ տուէք բերէք » :

3. Աշակերտները գացին բերին ու անոնց վերայ դրին իրենց զգեստները և Յիսուս հեծաւ էջը : Շատ ժողովուրդ, որ լսէր էր Յիսուսի Բեթանիա գալը և գացեր էր զանիկա հոն տեսնելու, և ա՛ն ամէնը որոնք Եփրայիմէն (Պէրեա) հետը մէկտեղ եկած էին՝ իրենց զգեստները հանելով՝ ճամբուն վրայ փոցեցին :

4. Ուրիշներ ալ ծառերէն ճիւղեր կը կտրէին և ճամբուն վրայ կը տարածէին : Քաղաքէն ալ շատեր, որոնք տօնին ատի՞ւ հաւաքուեր էին, արմաւենիի ոստեր ձեռքերնին առած՝ ելան զանիկա դիմաւորելու երբ իմացան որ Երուսաղէմ կուգայ :



5. Այս բոլոր բազմութիւնը սկսաւ ան-ասենը ուրախութեամբ և մեծ ձայնով օրհնել զ՛կստուած՝ այն բոլոր հրայքներուն և գթութեան գործերուն համար զորս տեսեր էին անկէ ու կ'ըսէին . « Օրհնեալ է ատ թագաւորը որ Տիրոջը անունով կուգայ . Ովսաննա՛ ի բարձունս » :

6. Բազմո թեանը մէջ գտնուող փարիսեցիներէն



մէկ քանիներ զիտել տուին իրեն . « Վարդապե՛տ, ա՛տ աշակերտներդ յանդիմանէ » . Յիսուս ըսաւ . « Կ'ըսեմ ձեզի . թէ որ ատոնք լուռ կենան, քարերը պիտի ազաղակեն » :

7. Երբոր մօտեցաւ ու տեսաւ Յիսուս Երուսաղէմը, լացաւ անոր վրայ ու ըսաւ . « Դ՞ոնէ աս քու օրուանդ մէջ զիտնայիր իսաղազութիւնդ . բայց ծածկըւեցաւ քու աչքերէդ, վասնզի օրեր պիտի գան քու վրադ, որ թշնամիներդք ու բոլորտիքդ պատնէշ պի-

տի շինեն և քեզ պիտի պաշարեն, հիմնայտակ պիտի ընեն շէնքերդ, այնպէս որ քար քարի վրայ չպիտի թողուն քու մէջդ և քու զաւկներդ պիտի մորթեն վասն զի չճանչցար այցելութեանդ ժամանակը » :

8. Երբոր Երուսաղէմ մտաւ Յիսուս, զըրգեցաւ բոլոր քաղաքը, կը հարցնէին . « Ո՞վ է ասիկայ » . ու ժողովուրդը կ'ըսէր . — Աս է Դաւիթին Որդին (Մեսիան) » :

9. Յիսուս շիտակ տաճարը գնաց և չորս կողմը ամէն բաներ աչքէ ահցուց և իրիկունեղած ըլլալուն, Բեթանիա գնաց աշակերտներուն հետ և հոն գիշերեց :

( Հայոց Ս . Եկեղեցին Յիսուսի այսպէս յաղթանակով Երուսաղէմ գալը կը տօնէ Զատիկէն առաջ հանդիպած կիրակի օրը և կը կոչէ զայն ԾԱՂԿԱ-ԶԱՐԴ . այն օրին յատուկ է « Որ վերօրհնիս » շարականը ) :



## Գ Լ Ո Ւ Խ Լ Թ .

### Ֆաչորդ օրերու դէպքերը

1. Երկրորդ օրը Յիսուս նորէն դարձաւ Երուսաղէմ ու տաճարը գնաց : Հոն կայրեր ու կաղեր եկան զորս բռնկեց : Տղաքները սկսան երգել ու ազաղակել . « Ովսաննա Դաւիթին որդիին (Մեսիանին) » . քահանայապետներն ու դպիրները բարկացան այդ գովաբանութիւնը լսելով :



2. Յիսուսի ըսին. « Կը լսե՞ս, ի՞նչ կ'ըսեն անոնք » . Յիսուս ըսաւ անոնց . « Այո՛, կը լսեմ . դուք բնաւ չէ՞ք հարգացեր թէ մանուկներուն և կաթնկեր տղաքներուն բերնով գովութիւն կատարեցիր » :

3. Այս խօսքը նորէն առիթ եղաւ որ քահանայապետներն ու դպիրները նորէն խորհրդածեն անոր սպանութեան խորհրդին վրայ . դիւրութիւն մը կը փնտռէին վասնզի կը վախնային Յիսուսի ժողովրդականութենէն :

Իրիկունը Յիսուս նորէն դուրս ելաւ քաղաքէն :

4. Յաջորդ օրը առաւօտուն նորէն դարձաւ անիկա քաղաքը՝ իր աշակերտներովը և տաճարը մըտնելով սկսաւ քարոզել : Քահանայապետներն ու դպիրները սրտերնուն մախանքէն վիճաբանութիւն բացին . հարցումներ կ'ընէին :

5. Յիսուս անոնց սրտին խորը կարդար, ուստի պատմեց անոնց « Այգիի մշակներ առակը » ու ըսաւ . « Եթէ ձեր նախնիք սպաննեցին մարգարէները, դուք պիտի լեցնէ՞ք ձեր հայրերուն գործած չարութիւններուն պակասը՝ սպաննելով Աստուծոյ միածին Որդին » :

6. Յիսուսի՝ առակով հասկցուցած խօսքին իմաստը ճիշտ հասկցան փարիսեցիները և սաստիկ ցաւեցան, ուստի և ուղեցին քաղաքային իշխանութեան առջեւ յանցաւոր ձգող սխալ խօսք մը քաղել իրմէն՝ պատգամաւորի միջոցով :

7. Հերովդէսեան կուսակցութենէն էին պատգամաւորները, որոնք եկան ու ըսին իրեն . « Տէ՛ր, զիտենք որ ճշմարիտ ես ու ճշմարիտ Աստուծոյ ճամբան կը քաղաքը » :

բան կը սորվեցնես, երեսպաշտութիւն չես ընէր մարդու . ուստի մեզի ըսէ՛ . — Կայսեր հարկ տալը արժան է թէ ոչ » :

8. Յիսուս ըսաւ անոնց . « Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորնե՛ր, ցոյց տուէ՛ք ինձի տուրքին դրամը » : Եւ երբ ցոյց տուին անոնք, Յիսուս հարցուց . « Դրամին վրայի գիրը որի՞նն է » . անոնք ըսին . « Կայսրին է . » :

Յիսուս ըսաւ . « Ուրեմն ան որ կայսրինն է՝ Կայսրինն տուէ՛ք, և ա՛ն որ Աստուծոյ է, Աստուծոյ տընէք » :

Պատգամաւորները զարմացան ու թողլով զանիկա գացին :

Գ Լ Ո Ի Խ Խ .

Յիսուսի վերջին հրապարակային փարոզը

1. Յիսուսի հետ վիճաբանութիւնը շարունակեցին Սաղուկեցիները, անոնցմէ ետքը դպիրները, և Յիսուս իշխանաբար արձակած վճիռներով ափ ի բերան ըրաւ հակառակորդները :

2. Վերջէն դառնալով ժողովուրդին՝ ըսաւ . « Մովսէսին ամօրը նստած են դպիրներն ու փարիսեցիները : Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէ՛ք ու ըրէ՛ք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք, ինչու որ կ'ըսեն ու չեն ըներ » :



3. Դասնալով դպիրներուն ու փարիսեցիներուն ըսաւ. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ երկինքի թագաւորութիւնը մարդոց առջև կը գոցէք, քանզի դուք շէք մտնել և մտնողներուն ալ շէք թողուր որ մտնեն »:

4. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ որբեւայրիներու տունը կ'ուտէք ու մարդոց երևնալու համար աղօթքը կ'երկնցնէք. անոր համար աւելի դատապարտութիւն պիտի բնդունիք »:

5. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պտտիք՝ մէկը նորահաւատ ընելու ու երբոր ըլլայ՝ զանիկա երկու անգամ աւելի գեհնի որդի կ'ընէք »:

6. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին ու յամանին տասանորդը կը վճարէք ու կը ձգէք օրէնքին ծանրագոյն բաները՝ ԴԱՏԱՍՏԱՆԸ, ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ և ՀԱԻՍՏՔԸ: Ասո՛նք պէտք էր ընել և անոնք չձգել »:

Կո՛յր առաջնորդներ, որ մօղուկը կը քամէք և ուղտը կը կլէք »:

7. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք ու ներսէն լեցուն էք յափշտակութիւնով ու անիրաւութիւնով »:

8. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք զրոյն գեղեցիկ կ'երեւան ու ներսէն մեռելներու սկզբներով լեցուն են: Անոնց նման դուք ալ

զրոյն մարդոց արդար կ'երեւաք ու ներսէն կեղծաւորութիւնով ու անօրէնութիւնով լեցուն էք: »

9. « Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ մարգարէներուն տապանները կը շինէք և արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. « Եթէ մենք մեր հայրերուն օրերը եղած ըլլայինք, մարգարէներուն արիւնին մասնակից չէինք ըլլար »: Ուրեմն դուք ձեզի համար կը վկայէք թէ մարգարէները սպաննողներուն զաւկներն էք »:

10. « Երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ՝ արդար Արէլին արիւնէն մինչեւ տաճարին մէջ սպաննուող Զաքարիային արիւնը: »

11. « Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ որ մարգարէները կ'սպանէիր ու քնդի զրկուած Աստուծոյ պատգամաւորները կը քարկոծէիր. քանի՛ անգամ տղաքներդ ժողվել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը թւերուն տակ կը ժողվէ ու դուք չուզեցիք: Ահա ձեր տունը ձեզի աւերակ թողուած պիտի մնայ: »

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յիսուսի մատուցելը

1. Վայերը կարգալէ վերջը, խօսեցաւ Յիսուս Երուսաղէմի կործանումին և աշխարհի կատարածին վրայ ընդարձակ նկարագրութիւն մը և ապա ըսաւ



իր աշակերտներուն . « Գիտէք որ երկու օրէն Զատիկ կ'ըլլայ և Մարդուն Որդին կը մատնուի խաչը ելլելու » :

2. Այդ նշանաւոր օրուան գիշերը Հրէաներուն Սանհետրիոնը (Մերակոյտ) կայիափայի տունը գաղտնի ժողով կազմեց ու խորհուրդ ըրաւ որ նենգութեամբ բռնէ Յիսուսը ու մեռցնէ , վասն զի խռովութենէ կը վախնային : Բայց իրենց ջանքերը անպտուղ մնացին և Յիսուս վաչերու շարքով մը անոնց դիմակն ալ վար առեր էր :

3. Յիսուս ալ նոյն միջոցին իր բարեկամ Սիմոնին տունը ընթրիքի նստած էր , ուր Ղազարոսի քոյրը , Մարիամ , շիշ մը թանկագին իւղ բերաւ և օծեց Յիսուսի գլուխն ու ոտքերը :


4. Յիսուսի 12 առաքեալներէն Յուդա Իսկարիովտացին , որ գանձագետն էր խուճրին և գող էր , կեղծաւորարար ըսաւ . « Մեղք չէ՞ր որ այդ իւղը թափուեցաւ , քանզի ասիկայ կրնար ծախուիլ և աղքատներուն բաշխուիլ » :

5. Քանի մը աշակերտներ ալ յիամտօրէն կրկնեցին Յուդայի խօսքը : Յիսուս ըսաւ . « Մի՛ անհանգիստ ընէք այդ կինը վասն զի բարի գործ մ'էր անոր ըրածը . աղքատները ամէն ատեն ձեր քովն են , բայց զիս ամէն ատեն չունիք » :

6. Յիսուս ըսաւ . « Այդ կինը թաղումիս համար ըրաւ այդ բանը . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , բոլոր աշխարհի մէջ որ Աւետարանս քարոզուի՝ այդ կնկան ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար » :

7. Յուդա Իսկարիովտացի այդ խօսքին վրայ գնաց քահանայապետներուն ու ըսաւ . « Ինձի ի՞նչ կ'ուզէք տալ որ ես ձեզի մատնեմ Վարդապետս » :

Անոնք ալ երեսուն արծաթ խոստացան անոր , Յուդա անկից ետքը պատեհութիւն կը փնտռէր , որ զԱնիկա մատնէ անոնց :



### Գ Լ Ո Ւ Խ Ի Բ .

#### Յիսուս վերնասան մէջ կը հաստատէ Հաղորդութեան խորհուրդը

1. Բաղարջակերի տօնին (Պասէք = Զատիկ) առաջին օրուան իրիկունը , զարդարուած ու մեծ վեր-



Նստան մը մէջ՝ Յիսուս սեղան նստաւ 12 առաքեալներուն հետ :



2. Յիսուս ըսաւ անոնց. « Փափաքելով փափաքեցայ որ այս Չատիկը ձեզի հետ ուտեմ՝ շարչարուելէս առաջ » : Բաժակ մը առնելով՝ օրհնեց գինին ու տուաւ որ խմեն : Նոյն միջոցին աշակերտները վէճ մը կ'ընէին թէ իրենց մէջ ո՞վ մեծ պիտի սեպուի :

3. Յիսուս սեղանէն ելաւ. ղենջակ մը կապեց մէջքը, կոնքին մէջ ջուր լեցնելով՝ սկսաւ աշակերտներուն ոտքերը լուսալ և ղենջակովը սրբելով, կ'ըսէր . « Թագաւորները կը տիրեն սզգերու և անոնց, արերար կը կոչուին, բայց դուք անանկ չպիտի ըլլաք. հապա՞ ձեր մէջէն մեծ եղողը պզտիկին պէս պիտի ըլլայ » :

4. Կարգը երբ Պետրոսին եկաւ, Պետրոս ըսաւ « Տէր, դո՞ւն իմ ոտքերս պիտի լուսա », Յիսուս ըսաւ. « Ըրածս հիմայ չես կրնար գիտնալ, հապա ետքէն » :

Երբ Պետրոս նորէն ընդդիմացաւ, Յիսուս ըսաւ. « Եթէ չլուամ ոտքերդ, ինձի հետ մաս չես ունենար » . ան ատենը Պետրոս թողուց որ լուայ :

5. Ոտքերնին լուալէ ետքը զգեստները հազաւ, սեղան նստաւ ու ըսաւ Յիսուս. « Գիտե՞ք, ի՞նչ է որ ըրի ձեզի. դուք Վարդապետ և Տէր կը կոչէք զիս և այդպէս եմ. արդ ես՝ ձեր Տէրն ու Վարդապետը՝ որ ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ իրարու ոտք լուաք » :

6. Այս խօսքերը ըսելէն ետքը՝ Յիսուս յուզուեցաւ ու ըսաւ. « Ծղմարի՛տ ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի, ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ » :

Աշակերտները իրարու կը նայէին տարակուսած՝ թէ արդեօք որի՞նչ կ'ըսէր :

7. Աշակերտները հարցնել սկսան իրեն թէ « Տէ՛ր, ո՞վ է ան. մի՞թէ ե՞ս եմ » Յուդա Իսկարիովտացին ալ լրբութեամբ հարցուց. « Մի՞թէ ե՞ս եմ » : Յիսուս ըսաւ. « Դո՞ւն ըսիր » . Ինչ որ՝ Դուն ես, ըսել է. սակայն աշակերտները չհասկցան : Տէր Յիսուս պատառը թաթխեց՝ Յուդային տուաւ ու ըսաւ. « Գնա՛ » Յուդա ելաւ գնաց իր վատ խորհուրդը գործադրելու : Իսկ աշակերտները կարծեցին թէ Յուդա տօնին վերաբերեալ բան մը առնել կ'երթայ :

8. Ընթրիքը կը շարունակէին ուտել, երբ Տէր Յիսուս բազարը հացը ձեռքը առաւ, օրհնեց, կտրեց, աշակերտներուն տուաւ ու ըսաւ. « ԱՌԷ՛Ք, ԿԵՐԷ՛Ք, ԱՍ է ԻՄ ՄԱՐՄԻՆՍՍ որ ձեզի համար արուած է. ասիկա ըրէք զիս յիշելու համար » :

9. Ընթրիքէն վերջն ալ բաժակով գինին առաւ ու ըսաւ. « Ամէնքդ ալ խմեցէք ասիէ. ինչու որ ԱՍԻԿԱ՛ է ԻՄ ԱՐԻԻՆ՝՝ նոր ուխտի, որ ձեզի ու շատերուն համար կը թափուի՝ մեզքի թողութեան համար. Ասիկա ըրէք զիս յիշելու համար » :

(Հայոց Ս. Եկեղեցին միշտ կը կատարէ այս Ս. խորհուրդը ու կը հաղորդէ բոլոր հաւատացեալները Տիրոջ ՄԱՐՄԻՆԻՆ ՈՒ ԱՐԻԻՆԻՆ, վասն զի « Ո՛վ որ չուտէ իմ մարմինս ու ո՞վ որ չխմէ իմ արիւնս՝ կեանք չունի » ըսաւ Տէր Յիսուս) :





### Գ Լ Ո Ւ Խ Խ Գ .

#### Յիսուսի վերջին խօսքերը

1. Ապա սաղմոսներ երգեցին, որմէ ետքը Յիսուս ըսաւ . « Հիմակ փառաւորութեցաւ Մարդուն Որդին : Զաւակներս, քիչ մը ատեն ալ ձեզի հետ եմ, զիս պիտի փնտոէք և չպիտի կրնաք գալ իմ հետս հիմակ » :

2. « Նոր պատուիրան մը կուտամ ձեզի, որ մէկ զմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի : Ասով ամէնքը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք թէ որ իրարու վրայ սէր ունենաք » :

3. Պետրոս առաքեալն ըսաւ . « Տէ՛ր, ո՛ր կ'երթամ » . Յիսուս ըսաւ անոր . « Ո՛ր որ ես կ'երթամ, դուն չես կրնար գալ հիմակ, բայց ետքը պիտի գաս » : Պետրոս պատասխանեց . « Հիմակ ի՛նչու չեմ կրնար գալ, ես պատրաստ եմ քեզի համար կեանքըս իսկ զոհելու » :

4. Յիսուս ըսաւ . « Դո՛ւն կեանքդ պիտի զոհես ինծի համար . ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի թէ աս զիչեր հաւը երկու անգամ չխօսած՝ դուն զիս պիտի ուրանաս երեք անգամներ » :

5. Յիսուս ըսաւ նորէն ամէնուն . « Թող սիրտերնիդ չխռովի . Աստուծոյ ու ինծի հաւատացէք : Հօրս տունը ( Երկինքը ) շատ բնակարաններ կան, ապա թէ ոչ՝ պիտի ըսէի թէ հիմակ կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ : Երբ երթամ, նորէն կուգամ ու ձեզ

քովս կ'առնեմ, որպէս զի ո՛ւր որ ես եմ, դուք ալ հոն ըլլաք » :

6. Թովմաս առաքեալն ըսաւ . « Տէ՛ր, չենք գիտեր ուր կ'երթաս ու ի՞նչպէս կրնանք ճամբան գիտնալ » : Յիսուս ըսաւ . « Ես եմ ճանապարհը, Ճշմարտութիւնը և կեանքը . մէկը Հօրը քով չի գար, բայց եթէ իմ միջոցովս » :

7. Փիլիպպոս առաքեալն ըսաւ : « Տէր, Հայրը մեզի ցուցուր ու հերիք է մեզի » : Յիսուս ըսաւ . « Այսքան ժամանակ ձեզի հետ եմ ու զիս չճանչցա՞ր, Փիլիպպէ՛, ա՛ն որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ և դուն ինտո՞ր կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր : Չե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջն եմ ու Հայրը իմ մէջս » :

8. « Ինչ խօսքերը որ ես կը խօսիմ, չէ թէ ինքրիմէս կը խօսիմ, հապա Հայրը, որ իմ մէջս բնակած է, անիկա կը գործէ ան գործերը » :


9. « Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ա՛ն որ ինծի կը հաւատայ, իմ գործածներս ինքն ալ պիտի գործէ և անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի գործէ, վասնզի ես Հօրս քով կերթամ և իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատարէ Անիկա որպէս զի Հայրը փառաւորուի Որդիովը » :

10. « Թէ որ զիս կը սիրէք, պատուէրներս պահեցէք . ես ալ Հօրս պիտի աղաչեմ և ուրիշ ՄիտիՍԱՐԻՉ ՄԸ պիտի տայ ձեզի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի, ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ, զոր աս աշխարհը չի կրնար ընդունիլ ինչու որ չի տեսներ զանիկա ու չի ճանչնար . բայց դուք կը ճանչնաք զայն,



ինչու որ ձեր քովը կը բնակի, ձեր մէջը պիտի ըլլայ » :

11. « Զեզ որբ չեմ թողուր, կուգամ ձեզի. քիչ ատենէն ա՛լ աշխարհ զիս չի տեսներ, բայց դուք պիտի տեսնէք զիս, ինչու որ ես կենդանի եմ և դուք կենդանի պիտի ըլլաք » : Այն օրը պիտի գիտնաք թէ ես Հօրս մէջն եմ և դուք իմ մէջս ու ես ալ ձեր մէջը » :



### Գ Լ ՈՒ Խ Խ Դ.

#### Յիսուսի վերջին խօսքերը (Շարունակութիւն)

1. Յիսուս ըսաւ. « Աս բաները ձեզի խօսեցայ քանի որ ձեր քովն եմ, բայց մխիթարիչ՝ Ս. Հոգին, զոր Հայրը իմ անունովս պիտի զրկէ, անիկայ պիտի սորվեցնէ, և ինչ որ ես ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ » :

2. Սեղանէն ելան և վերնատունէն կը պատրաստուէին մեկնիլ : Յիսուս շարունակեց իր սիրագեղ խօսքերն ու ըսաւ. — « Ես եմ ճշմարիտ որթը և Հայրս մշակ է : Ամէն ձիւղ որ իմ վրաս է ու պտուղ չի բերեր կը կտրէ զանիկայ, և ան ամէնը որ պտուղ կը բերէ, կը մաքրէ որ ա՛լ աւելի պտուղ բերէ » :

3. « Ինչպէս որ ձիւղը չի կրնար ինքրիմէն պտուղ բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ, ա-

նանկ ալ դուք չէք կրնար պտուղ բերել՝ թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք : Իմ մէջս կեցէք ու ես ձեր մէջը » :

4. « Ինչպէս որ Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սիրեցի. իմ սիրոյս մէջ հաստատ կեցէք՝ ինչպէս որ ես իմ Հօրս պատուէրները պահեցի և անոր սիրոյն մէջը կեցեր եմ » :

5. « Ա՛ս է իմ պատուէրս, որ մէկզմէկ սիրէք ինչպէս որ ես ձեզ սիրեցի » :

« Ասկից աւելի մեծ սէր չի կրնար ունենալ մէկը, որ իր կեանքը բարեկամներուն համար զոհէ : Դուք իմ բարեկամներս էք, թէ որ ընելու ըլլաք ինչ որ ձեզի պատուիրեցի » :

6. « Աս կը պատուիրեմ ձեզի որ մէկզմէկ սիրէք. թէ որ աշխարհ զձեզ կ'ատէ, գիտցէք որ նախ զիս ատեց : Թէ որ աշխարհէս եղած ըլլայիք՝ աշխարհ իրենները կը սիրէր անչուշտ. բայց որովհետեւ աշխարհէս չէք ու ես ձեզ ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ » :

7. « Միտքերնիդ բերէք ան խօսքը, որ օր մը ձեզի ըսի թէ Ծառան իր տիրոջմէն մեծ չէ. թէ որ զիս հալածեցին՝ ձեզ ալ պիտի հալածեն, թէ որ իմ խօսքս պահեցին, ձերն ալ պիտի պահեն » :

8. « Զեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելիք բայց հիմայ չէք կրնար տանիլ : Երբոր ինքք՝ ճշմարտութեան Հոգին՝ գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ ու գալիքները պիտի պատմէ ձեզի » :

9. « Անիկայ զիս պիտի փառաւորէ, ինչու որ իմինէս պիտի առնէ ու ձեզի պիտի պատմէ » :



«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք պիտի լաք, եւ աշխարհ պիտի ուրախանայ. սակայն ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի » :

10. Աշակերտները միաբերան ըսին . « Ահա հիմակ յայտնապէս կը խօսիս եւ առակ մըն ալ չես ըսեր, հիմակ իմացանք որ ամէն բան գիտես » :

Յիսուս ըսաւ . « Հիմայ կը հաւատա՞ք. ահա ժամանակ պիտի գայ ու եկած ալ է, որ ամէնքդ ցերրուցան պիտի ըլլաք ու զիս մինակ թողուք » :

11. « Աս բաները խօսեցայ, որ ինձմով խաղաղութիւն ունենաք: ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ՆԵՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՔ, ԲԱՅՅ ՔԱՋԱՍԻՐՏ ԵՂԷՔ— ԵՍ ԱՇԽԱՐՀԻՆ ՅԱՂԹԵՑԻ » :



### Գ Լ Ո Ւ Խ Խ Ե

#### Յիսուսի բարեխօսական աղօթքը

1. Յիսուս աւարտելով իր խօսքերը՝ իր աչքերը դէպի երկինք վերցուց ու ըսաւ . « Հայր, ժամանակը հասեր է, փառաւորէ՛ քու Որդիդ՝ որ քու Որդիդ ալ քեզ փառաւորէ: Ինչպէս որ իրեն իշխանութիւն տրւիր ամէն մարմնոյ վրայ, Ան յաւիտենական կեանք պիտի տայ ամենուն որ իրեն տուիր » :

2. « Այս է յաւիտենական կեանքը, որ ճանչնան զքեզ միմիայն ճշմարիտ Աստուածդ ու Յիսուս Քրիստոսը, զոր Դուն զրկեցիր » :

3. « Ես զքեզ երկրի վրայ փառաւորեցի. ան գործը որ ինձի տուիր ընելու՝ լինցուցի եւ հիմակ, ո՛վ Հայր, փառաւորէ՛ զիս ան փառքովը որ աշխարհի ըլլալէն առաջ քովդ ունէի » :

4. « Բու անունդ յայսնի ըրի ան մարդոցը, որոնք որ աշխարհէս ինձի տուիր. քուկդ էին անոնք ու ինձի տուիր եւ քու խօսքդ պահեցին » :

« Հիմակ գիտցան թէ ան ամէնը որ ինձի տուիր, քեզմէ են » :

5. « Ես անոնց համար կ'աղաչեմ, չէ թէ աշխարհի համար կ'աղաչեմ, ինչու որ անոնք քուկդ են » :

« Ես՝ ա՛լ աշխարհի մէջ չեմ. բայց անոնք աշխարհի մէջ են եւ ես քեզի կուգամ, ո՛վ Ս. Հայր, քու անունովդ պահէ զանոնք որպէս զի մէկ ըլլան ինչպէս որ մենք մէկ ենք » :

6. « Ի՞նչ որ աշխարհի մէջ էի անոնց հետ, ես զանոնք կը պահէի Բու անունովդ եւ անոնցմէ մէկը չկորսուեցաւ, բայց միայն ան՝ կորստեան որդին՝ ( Յուդա ) որ գրուածը կատարուի » :

7. « Չեմ աղաչեր որ անոնք աշխարհէն վերցնես, հապա որ անոնք շարէն պահես: Սրբէ՛ անոնք քու ճշմարտութիւնովդ վասն զի քու խօսքդ ճշմարտութիւն է » :

8. « Չէ թէ մինակ անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինձի հաւատացողներուն համար ալ: Որ ամէնն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս՝ ու ես՝ Բու մէջդ, որ անոնք ալ մեր մէջը ըլլան, որպէս զի աշխարհս հաւատայ թէ Դուն զիս զրկեցիր » :



9. «Ո՛վ Հայր, կ'ուզեմ որ ո՛ւր որ ես եմ, անոնք ալ իմ հետս ըլլան որպէս զի տեսնեն իմ փառքս զոր ինձի տուիր, ինչու որ դուն զիս սիրեցիր աշխարհիս սկիզբէն առաջ » :

10. « Ո՛վ արդար Հայր, աշխարհս քեզ չը ճանչցաւ բայց ասոնք ճանչցան թէ Դուն զիս զրկեցիր և Քու անունդ անոնց ճանչցուցի ու պիտի ճանչցնեմ որպէսզի ա՛ն սէրը որով դուն զիս սիրեցիր՝ անոնց մէջը ըլլայ ու ես ալ անոնց մէջ » :

Գ Լ Ո Ւ Խ Խ Զ .

Յիսուս Գեթսեմանիի մէջ կ'աղօթէ եւ կը բռնուի

1. Յիսուս աւարտելով իր այս վսեմ աղօթքը՝ աշակերտներուն հետ կեդրոն հեղեղատին անդիի կողմը գտնուած պարտէզին մէկը մտաւ, որ կը գտնուէր Զիթենիներու լեռին ստորտար և կը կոչուէր Գեթսեմանի :

2. Յիսուս նստեցուց աշակերտները ու իրեն հետ առնելով Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը՝ առաջ անցաւ, սկսաւ տրտիլ ու վշտանալ :

Այդ երեքին ըսաւ. « Ինձի հետ արթուն կեցէ՛ք » :

3. Քարրնկէցիմը չափ անոնցմէ ալ առաջ անցնելով երեսին վրայ ինկաւ Յիսուս և աղօթք ըրաւ ըսելով. « Ո՛վ Հայր իմ, թող այս բաժակը ինձմէ

անցնի, բայց չէ թէ ինչպէս որ կ'ուզեմ ես. ճապա ինչպէս որ դուն կը կամիս » :

4. Եկաւ երեքին քով և զանոնք քնացած զըտնելով ըսաւ. « Պե՛տրոս, ժամ մ'ա՞լ չկրցիք ինձի հետ արթուն մնալ » :

« Արթուն կեցէ՛ք, աղօթք ըրէ՛ք, որ փորձու թեան մէջ չիյնաք : Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար » :



5. Երկու անգամներ ևս գնաց աղօթեց և նորէն գալով քնացած գտաւ զանոնք վերջին անգամուն Յիսուս ըսաւ. « Ելէ՛ք երթանք ասկից. ա՛հ զիս մատնողը մօտեցաւ » :

6. Խօսքը դեռ չէր լրացուցած, երբ Յուդա Իսկարիօտացի, որ գիտէր Յիսուսի հոն ըլլալը եկաւ հոն :

7. Յուդայի կը հետևէր մեծ բազմութիւն, որոնք սուրերով ու բիրերով զինուած էին. զինուորներու



գունդ մը, քահանաներ, դպիրներ ու շատ մը ծերեր : Մէկ քանիներու ձեռքն ալ ջահեր ու լապտերներ կայինք իշերին համար :

8 . Յուզա մօտեցաւ Յիսուսին ու զանիկայ համբուրելով՝ ըսաւ . « Բարև, Վարդապետ » :


Յիսուս պատասխանեց . « Յուզա՛, համբուրելով կը մատնես Մարդուն Որդին » :

Մատնիչը անանկ նշան տուեր էր թէ ես՝ ո՛վ որ համբուրեմ ա՛ն է Յիսուսը :

9 . Յիսուս ըսաւ բազմութեան . « Ո՞վ կը փրնտէք » : Անոնք ալ պատասխանեցին « Նազովրեցի Յիսուսը » : « Ե՛ս եմ » ըսաւ Յիսուս : Ան ատեն ամբողջ բազմութիւնը ետ ետ գնաց և գետին փռուեցաւ :

10 . Յիսուս ըսաւ . « Ես եմ, ըսի ձեզի . ուստի թողուցէք ատոնց որ երթան, եթէ զիս կը փնտէք » :

11 . Ան ատեն հազարապետը, զինուորներուն գունդը ու ծերակոյտին սպասաւորները կապեցին Յիսուսը : Այդ միջոցին աշակերտները, ինքզինքնին ազատելու համար, ամէնը մէյմէկ կողմ փախան :



### Գ Լ ՈՒ Խ Խ Է .

Յիսուս կը դատուի Սանհեսրիոնին առջեւ

1 . Տէր Յիսուսը կապելէ վերջը այդ բազմութիւնը բերաւ զինքը նախ հրաժարեալ Աննա քահանայապետին քով, որ կարճ հարցուփորձէ մը ետքը զրկեց կայրափա

քահանայապետին, որ Սանհետրիոն ըսուած ազգային մեծ ժողովին նախագահն էր :

2 . Գումարուած էր այդ ծերակոյտը և կ'զբաղէր գտնել այնպիսի վկաներ, որոնք յանցանք մը կարողանային հաստատել Յիսուսի վրայ և այդպէսով իրենց սիրական գողափարին համեմատ կարողանային սպաննել զանիկայ :

3 . Նոյն միջոցին, Պետրոսն ու Յովհաննէսն ալ Յիսուսի դատաստանին ելքը գիտնալու համար մտած էին քահանայապետին պալատը . վասն զի Յովհաննէս ճանչուրութիւն ունէր և չէր քաջուիր, Պետրոս ալ Յովհաննէսի զրուցելովը ներս առնուած էր :

4 . Սակայն երբ Պետրոսին ըսին թէ . « Միթէ դո՞ւն ալ Յիսուսի աշակերտներէն ես », Պետրոս վախնալով՝ ուրացաւ ու ըսաւ « Չե՛մ » :

Ուրիշ մը քիչ մը վերջը ըսաւ . « Չէ՞ որ դուն պարտէզին մէջ անոր հետ էիր » . Պետրոս նորէն կրկնեց իր ուրացութիւնը և ըսաւ . « Ես չեմ ճանչնար զայն » . նոյն միջոցին հաւը խօսեցաւ :

5 . Երրորդ անգամ ըլլալով աղախին մը և ուրիշներ ըսին Պետրոսի թէ « Գուն իրաւ անոնցմէ ես, ահաւասիկ արտասանութիւնդ Գալիլեացիի է » . Պետրոս սկսաւ անէծքներով ու երդումներով ուրանալ զԱնիկայ ու ըսել . « Ես այդ մարդը չեմ ճանչնար » : Ան ատեն կրկին հաւը խօսեցաւ :

6 . Նոյն միջոցին Տէր Յիսուսը ատեանէն դուրս հանած էին : Տէրը՝ Պետրոսին երեսն ի վեր նայեցաւ ու Պետրոսին միտքն ինկաւ թէ ամենագէտ



իր վարդապետը իրիկուընէ՛ ըսեր էր իրեն թէ աս գի-  
շեր զիս պիտի ուրանաս :

Դուրս ելաւ պալատէն ու սաստիկ լացաւ :

7. Կայիափա և չարածողովը շատ մը ապօրինի  
ջանքերէ վերջը, երկու սուտ վկայ ճարեցին, որոնք  
ըսին. « Աս մարդը ըսաւ թէ ես կրնամ Աստուծոյ  
տաճարը քակել և երեք օրուան մէջ շինել » :

8. Յիսուս լուռ կը կենար այդ եղելութիւններուն  
և խօսքերուն առջև և չարածողովը շուարած էր  
վասնզի զանիկայ մահուան դատապարտելու զօրոզ  
ո՛րեւիցէ փաստ չի կար մէջտեղը :

9. Քահանայապետը ոտքի ելաւ ու ըսաւ Յիսուսի .  
« Ի՞նչու չես պատասխաներ. տես, ի՞նչ կը վկայեն  
ատոնք » : Յիսուս նորէն լուռ կեցաւ : Քահանայապետն  
ըսաւ . « Քեզ կ'երդմնցնեմ կենդանի Աստուծոյ ա-  
նունովը որ մեզի ըսես թէ զո՞ւն ես Գրիստոսը, կեն-  
դանի Աստուծոյ որդին » :

10. Յիսուս ըսաւ . « Դո՛ւն ըսիր » ( Երրայե-  
ցերէնի մէջ այս ձեւ խօսքը « Ես եմ » ըսել է ) « Քայց  
կ'ըսեմ՝ ձեզի . ասկէ ետեւ պիտի տեսնէք Մարդուն  
Որդին զօրութեան ( Աստուծոյ ) աջ կողմը նստած ու  
երկնքի ամպերուն վրայ նկած » :

11. Այն ատեն քահանայապետը պատոեց իր  
զգեստներն ու ըսաւ . « Ա՛յ ի՞նչ պէտք է մեզի վկա-  
յութիւն . լսեցիք ամենքնիդ ալ ատոր հայճոյութիւնը .  
դուք ի՞նչ կ'ըսէք » : Երեւակոյտը միաբերան պա-  
տասխանեց . « Մահապա՛րտ է » :

12. Ան ատենը ատեանէն դուրս հանեցին Տէր  
Յիսուսը և սկսան չարչարել . կը թքնէին երեսը ,

բռունցքով կը զարնէին , երեսը լաթով կը գոցէին ու  
կ'ապտակէին , ծաղրելով կ'ըսէին . « Մարգարէացի՛ր ,  
ո՞վ է որ զ'արկաւ քեզի » : Մինչև առաւօտ տեւեց այդ  
սոսկալի տանջանքը և Տէր Յիսուս համբերութիւնով  
տարաւ այդ դառն չարչարանքներն ու նախատինքը  
ինչպէս որ դարեր առաջ գուշակեր էր աւետարանիչ  
Մարգարէն ( Եսայի, ԾԳ . ) :

Գ Լ Ո Ի Խ Խ Ը .

Յիսուս Հռովմայեցի կուսակալ Պիղատոսին

կը արուի

1. Առաւօտուն քահանայապետն ու չարածողովը  
առին տանելու Յիսուսը Հռովմայեցի կուսակալ Պիղա-  
տոսին, որպէսզի դատէ զանիկայ . վասնզի մահուան  
պատիժը կրնար տրուիլ մինակ կայսրին անունով և  
անոր ներկայացուցիչ կուսակալին հրամանովը :

2. Մատնիչ Յուդա, երբ տեսաւ Յիսուսի մահուան  
դատապարտուիլը, խղճմտանքի խայթէն զղջաց, գնաց  
ձերակոյտին ու քահանայապետին եւ ըսաւ . « Մե՛ղայ,  
քանզի անմեղ արիւն մատնեցի . առէ՛ք ձեր տուած 30  
արծաթը . Քահանայապետն ու ձերակոյտը ըսին . « Մեզի  
ի՞նչ, չենք ետ առներ արծաթը » : Յուդա յուսահա-  
տեցաւ, արծաթը նետեց տաճարը և գնաց ինքզինքը  
կախեց :





Յ. Քահանայապետն ու ծերակոյտը կուսակալին պալատէն ներս չմտան, հապա դուրսի գաւիթը կեցան որպէս զի չպղծուին Հեթանոսի տունը մտնելով : ( Մարդասպանութիւն կ'ընեն ու չեն խիղճ ըներ ու կը համարին թէ Հեթանոսին տունը մտնելով կը պղծուին ) : Կուսակալը դուրս եկաւ մտիկ ընելու զիրենք :

Գ. Քահանայապետներն ու ծերակոյտը շատ մը ամբաստանութիւններ կ'ընէին Յիսուսի դէմ. իսկ Տէր Յիսուս կը լռէր, որուն համար Պիղատոս շատ զարմացաւ : Անիկա հարցուց Յիսուսին . « Դ՞ու՞ն ես Հրէաներուն թագաւորը » : Յիսուս ըսաւ « Դ՞ու՞ն ըսիր » :

Ծ. Պիղատոս ներս տարաւ Յիսուսը և առանձին միւսնոյն հարցումն ըրաւ . Յիսուս ըսաւ . « Դու՞ն քե՞նէ՞ կ'ըսես առ բանը թէ ուրիշները կ'ըսեն » : Պիղատոս սրդողեցաւ ու ըսաւ . « Միթէ ես հրեա՞յ եմ. ազգք ու քահանայապետներդ քեզ ինձի մատնեցին. դու՞ն ի՞նչ ըրած ես » :

Ե. Յիսուս ըսաւ . « Իմ թագաւորութիւնս առաջարկէն չէ, քանզի եթէ ըլլար՝ սպասաւորներս կը կոռէին անշուշտ, որ ես ասոնց ձեռքը չմատնուիմ » :

Պիղատոս ըսաւ . « Ուրեմն դու՞ն թագաւոր ես » : Յիսուս պատասխանեց, « Ես առ բանին համար ծնած ու եկած եմ աշխարհ, որ ճշմարտութեան համար վկայեմ և ան ամէնը, որ ճշմարտութեանն է, իմ ձայնիս պահանջ կը կախէ » :

Զ. Պիղատոս հարցուց . « Ի՞նչ է ճշմարտու-



թիւնը» և առանց պատասխանի սպասելու, համոզուած Յիսուսի անմեղութեանը՝ դուրս ելաւ ու ըսաւ ծերակոյտին ու բոլոր բազմութեանը որ պալատը շրջապատեր էր . « Ես յանցանք մը չեմ գտներ այս մարդուն վրայ . և որովհետեւ սովորութիւն մը ունիք Ձատկի տօնին որ ես բանտարկեալ մը ազատեմ՝ կ'ուզէ՞ք որ Յիսուսը արձակեմ » :



8. Ան առեմը ամբօրը պոռաց մէկ բերան (քահանայապետներէն թելագրուած), « Մի՛ արձակեք Յիսուսը, հապա բանտարկեալ Բարաբբան արձակէ » : Այս Բարաբբան մարդասպան մէկն էր :

9. Պիղատոս զինուորներուն ձեռնի տուաւ Յի-



սուսը, անոնք փուչէ պսակ մը ձեւացուցին եւ գլուխը դրին, ծաղրի համար ծիրանի զգեստ հագցուցին, որ իշխաններուն յատուկ էր նւ կ'ըսէին. « Բարե՛ւ, Հըրեաններուն թագաւորը », և ապտակներ կը տեղացնէին գլխուն :

10. Պիղատոս Յիսուսը դուրս հանեց այդ արհնչուայ եւ այլակերպած երեւոյթին սակ և կը յուսար որ այդպէսով գուժը պիտի շարժէ ժողովուրդին. սակայն, ընդհակառակը, բոլոր ժողովուրդը միաձայն աղաղակելով ըսաւ. « Սաչը հանէ՛ ատիկայ » :

11. Պիղատոս ջուր բերել տուաւ և ձեռքերը լուաց ըսելով. « Ես այդ արդարին արիւնէն քաւուած եմ. դուք ստածեցէք » :

Ան առեմ, ժողովուրդը միաձայն ըսաւ. « Ատոր արիւնը մեր և մեր գաւազներուն վրան թող ըլլայ » :

12. Քանի մը տկար ջանքեր ալ ըրաւ Պիղատոս բայց երբ պոռացին Հրեաները որ. « Եթէ արձակես այդ մարդը, կայսեր բարեկամ չես », Պիղատոս՝ Յիսուսը տուաւ որ տանին խաչեն :

(Պիղատոս եթէ արդար մարդ ըլլար, քաջութեամբ պիտի մերժէր այդ ժողովուրդին անիրաւ առաջարկը) :

## Գ Լ Ո Ւ Խ Խ Թ .

### Յիսուսի խաչելութիւնը

1. Ձինուորները Կուսակալին ապարանքէն հանեցին Յիսուսը, խաչափայտը շաղկը տուին, սովորութեան համաձայն. բայց երբ ճամբան տեսան որ անիկա անկարող պիտի ըլլար տանելու, օգնական բռնեցին Սիմոն անունով մէկը :

Տարին Յիսուսը Գողգոթա ըսուած տեղը, որ քա-



դաքէն դուրս էր և մահապարտներուն զխատուելու տեղն էր :

2. Ժողովուրդը կ'երթար Յիսուսի հետեւէն . կիները, սակայն, լացին անոր չարչարանքին վրայ . Յիսուս անոնց դառնալով՝ ըսաւ . « Ո՛վ Երուսաղէմի աղ-



ջիկներ, մի՛ լաք իմ վրայ, հապա ձեր ու ձեր գաւակներուն վրայ լացէք . վասն զի, թէ որ դալար փայտին ասանկ կ'ընեն՝ չորը ի՞նչ պիտի ըլլայ » :

3. Յիսուսը խաչեցին և իր երկու կողմն ալ երկու աւազակներ : Խաչելու անգութ տանջանքին ժամանակ Յիսուս աղօթեց . « Ո՛վ Հայր, թողութիւն

տուր ատոնց, ինչու որ չեն գիտեր ի՞նչ կ'ընեն » : (Չնաչխարհիկ մարդասիրութիւն Փրկչին) :

4. Ժամը երեքն էր երբ խաչեցին զանիկա Գողգոթա լեռան վրայ և Պիղատոս տախտակ մը դրնել տուած էր, որուն վրայ կը կարդացուէր .

« Յիսուս Նազովրեցի Թագաւորը Հրէից » :

( Խաչելութեան պատկերներուն վրայ սովորութիւն է դնել այս բառերու առաջին գիրերը Յ. Ն. Թ. Հ. ) :

5. Անցորդները, ծերակուտականները և զինուորները հոն կեցեր էին և կը նախատէին Յիսուսը : Քովը խաչուած աւազակներէն մէկն ալ կը հայհոյէր ու կ'ըսէր . « Եթէ դուն՞ես Աստուծոյ որդին, ազատէ քե՛զ ալ, մե՛զ ալ այս դառն տանջանքէն » :

6. Ան ատեն միւս կողմին աւազակը յանդիմանեց իր ընկերն ու ըսաւ Դուռն Աստուծ մէ չե՞ս վախնար : Իրաւացի պատիժ է այս իաջը մեր երկուքին գործած գէշութիւններուն, բայց ասիկայ գէշ բան մը չըբաւ : Եւ տէր Յիսուսի ուղղելով խօսքը՝ ըսաւ այդ աւազակը . « Տէ՛ր, իս յիշէ՛ երբ գաս արքայութիւնովդ » :

7. Յիսուս ըսաւ այդ գղջացող աւազակին . « Ճըշմարիտ կ'ըսեմ քեզի . այսօր դուռն իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս : »

Ժամը վեցին բոլոր երկրի վրայ խաւար տիրեց . արեւը անսովոր կէրպով խաւարեցաւ և երեք ժամ տևեց այդ բոլորական խաւարումը, ինչ որ բնաւ չէ պատահած :

(Անգութ Ժողովուրդ մը կը չարչարէր արդարութիւնն



ու ճշմարտութիւնը երկիր բերող Արեգակը և անշունչ բնութիւնը այսպէս բանական մարդերէն առաջ կ'անցնէր տխրելու ) :

8. Յիսուսի խաչին մօտ կեցեր էին իր մայրը՝ Մարիամ. Մագդաղինացի Մարիամը և ուրիշ կիներ, աշակերտ Յովհաննէսն ալ անոնց հետ : Յիսուս տեսնելով իր մայրը՝ ըսաւ անոր Յովհաննէսը ցուցնելով. « Ո՛վ կին, ահա քու զաւակդ » : Եւ իր սիրելի աշակերտին ըսաւ. « Ահա քու մայրդ » :


Ան ժամանակէն Յովհաննէս քովն առաւ Տիրամայրը և իբրեւ զաւակ խնամեց :

9. Ժամ իննին ատենները Յիսուս ըսաւ. « Ծառաւ հմ » : Հոն կեցողներէն մէկը սպունգով մը քացախ երկնցուց որ խմէ :

10. Յիսուս երբ խմեց քացախը, ըսաւ մեծ ձայնով. « Ամէն բան կատարուեցաւ » : Եւ ապա գլուխը ծռելով ըսաւ.

« Հա՛յր, քու ձեռքդ կ'աւանդեմ Հոգիս » . ու Հոգին աւանդեց :

( Հայոց եկեղեցին Մեծ Պահքի վերջին շաբաթը կ'անուանէ ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, և աւագ ուրբաթ օրը կը կատարէ Խաչելութեան յիշատակը : Շատ սրտաշարժ են նոյն օրին համար մեր երանաշնորհ Հայրապետներու շարադրած շարականները, որոնցմէ մէկն է « Այս օր անճառ » ը ) :



# Գ Լ ՈՒ Խ Ծ.

## Յիսուսի թաղումը

1. Յիսուս երբ իր հոգին աւանդեց, տաճարին վարագոյրը որ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅԸ կը բաժնէր Սըրբութիւն ըսուած մասէն՝ վերէն ի վար պատուեցաւ, երկրաշարժ մը եղաւ ու շատ քարեր պատուեցան, շատ սուրբեր մեռելու թենէ ողջնալով՝ գերեզմաններէն ելան ու Յիսուսի յարութենէն ետքը մտան սուրբ քաղաքը ( Երուսաղէմ ) ու շատերուն երեցան :

2. Հարիւրապետը ու անոնք որ իր հետ կը հրակէին խաչելութեան տեղին, տեսնելով երկրաշարժը և եղած բաները՝ վախցան ու ըսին. « Իրա՛ւ աս մարդը Աստուծոյ որդին էր » :

3. Քահանայապետներուն խնդրելովը՝ Պիղատոս մարդ զրկեց խաչուածները սպաննելու որպէսզի այդ տօնին օրով անոնց մարմինները չմնան խաչերուն վրայ՝ վասն զի Հրեաներուն աւանդութիւնը անանկ կը պահանջէր :

4. Եկան զինուորները, երկու աւագակներուն բարձերը կօտրեցին, իսկ երբ Յիսուսի եկաւ կարգը տեսան որ մեռած է : Հարիւրապետը սակայն տէգով Յիսուսի կողը ծակեց, ուսկից արիւն և ջուր վազեց ( նոր մեռած էր ) :

5. Ուրբաթ իրիկուն էր. Արեմաթացի Յովսէփ իշխանը որ Յիսուսի բարեկամն էր եւ Սանկտորինին ալ անդամ ( ու չէր միաբանած չարածողովին որոշում-



ներուն) համարձակեցաւ զնաց Պիղատոսին և խընդ-  
րեց որ Յիսուսի մարմինը իրեն տրուի թաղելու :

Ե. Պիղատոս հարիւրապետէն ստուգելէ վերջը  
Յիսուսի մեռած ըլլալը՝ շնորհեց Յովսէփին խնդրածը  
և Յովսէփ կտաւ զնեց ու Յիսուսի մարմինը խաչէն  
իջեցնելով պատնեց ու նոր փորած գերեզմանին մէջ  
թաղեց :

( Հայոց եկեղեցիին աւանդութիւնս է թէ Յով-  
սէփ հոն առաջին անգամ երգեց «Սուրբ Աստուած» երգը :

Զ. Նիկողիմոս իշխանն ալ զմուսսի ու հալուէի  
խառնուրդ մը առած և բերած էր յարգելու համար իր՝  
սիրելի բարեկամին ու վարդապետին մարմինը և ներ-  
կայ եղաւ թաղմանը :

Տ. Գերեզմանը մօտն էր Գողգոթային, և Գալիլի-  
ացի կիները, որոնք խաչին ոտքը կեցեր էին, Գե-  
րեզմանին դէմ նստեցան և դիտեցին անոր թաղումը  
և գերեզմանին դիրքը՝ իրենք ալ փափաքեցան խնկել  
անոր Ս. մարմինը, բայց որովհետեւ շաբաթամուտ էր  
ձգեցին ուրիշ ատենի իրենց մտադրածը և գացին :

Թ. Բահանայապետները Պիղատոսէն հրաման առ-  
նելով գացին կնքեցին Յիսուսի գերեզմանը և քովը  
հռովմայեցի զօրքերու շոկատ մը դրին հսկողու-  
թեան, որպէս զի « Չըլլայ որ Յիսուսի աշակերտ-  
ները փորձեն անոր մարմինը զողնայ և համբա-  
ւեն թէ յարութիւն առեր է անիկա : » (Չէին կար-  
դար անոնք սաղմոսը « Ոչ տացես սրբոյ քում տեսա-  
նել զապականութիւն » ) :

( Հայոց եկեղեցին մեծահանդէս կը տօնէ Տէր Յի-

սուսի թաղման տօնը Աւագ Շաբաթին և այդ օրուան  
շարականն է « Պարգեւատու » ն որ մեր Հայրա-  
պետներուն ամէնէն պատկառելիին, ամենէն խնկելի-  
ին՝ Սահակ Պարթեւի գլուխ գործոցն է ) :



## Գ Լ Ո Ւ Խ Ծ Ա .

### Յիսուսի Յարութիւնը

1. Կիրակի առաւօտ՝ արշալոյսի ծագման ժամա-  
նակ՝ մեծ գետնաշարժ եղաւ վասնզի Աստուծոյ հրեշ-  
տակը երկինքէն իջնելով՝ զնաց Յիսուսի գերեզմա-  
նին դռնէն մէկդի գլորեց կափարիչը և անոր վրայ  
նստաւ : Տեսքը փայլակի պէս էր և անոր հանդերձ-  
ները ձիւնի պէս ճերմակ էին :

2. Հրեշտակին իջնալէն զինուոր պահապանները  
խռովեցան ու մեռածի պէս եղան :

Նոյն միջոցին Գալիլիացի բարեպաշտ կնիկները,  
խունկեր և իւղեր ձեռքերնին բռնած՝ կուգային գե-  
րեզման, Տիրոջը մարմինը օծելու :

3. Անոնք ճամբան իրարու կ'ըսէին . « Ո՞վ պի-  
տի գլորէ գերեզմանի դռնէն քարը » : Հասնելով  
գերեզման՝ տեսան որ քարը գլորուած էր, ներս մը-  
տան և տեսան հրեշտակը ու շատ վախցան :

4. Հրեշտակը իրենց ըսաւ . « Մի՛ գարնուրիք,  
Յիսուս Նազովրեցին կը փնտոէք որ խաչուեցաւ, Ա-  
նիկԱ ՅՍՐՈՒԹԻԻՆ ՍՈՒԱԻ, հոս չէ, անա այն տե-



ղը ուր դրուած էր անկա : Գացէ՛ք, ըսէ՛ք Անոր աշակերտներուն և Պետրոսին թէ անա ձեռնէ առաջ Գալիլիա կ'երթայ . հոն պիտի տեսնէք զինքը ինչպէս որ ինք ձեզի ըսաւ » :

Ծ. Կինելը զողով ու զարմանքով բռնուած՝ ելան ու գերեզմանէն փախչելով կ'երթային աշակերտներուն պատմելու թէ « Տէրը յարութիւն առաւ : » Եւ



անա Յիսուս ինքը անոնց դէմը ելաւ ու ըսաւ . « Ողջոյն ձեզի » :

Թ. Անոնք մօտեցան և Յիսուսի ոտքերը բռնելով՝ երկրպագութիւն ըրին Անոր : Յիսուս ըսաւ անոնց . « Մի՛ վախնաք, գացէ՛ք եղբայրներուս (աշակերտներ), ըսէ՛ք որ Գալիլիա երթան ու հոն զիս պիտի տեսնեն » :

Պ. Մագդաղինացին, որ այդ կ'ինելուն հետ էր

բայց առանց գերեզմանը մտնելու՝ մինակ քարին զըլորուած ըլլալը տեսնելով շուտով գացեր և լուր տուեր էր Պետրոսին և Յովհաննէսին թէ « Տիրոջը մարմինը գերեզմանին մէջ չէ » :

Տ. Այդ լուրին վրայ Պետրոս և Յովհաննէս վազեցին գերեզմանը . սակայն, իրենք չտեսան հրեշտակը . Յովհաննէս տեսնելով որ Յիսուսի պատանքի կտաւները ծալուած դրուած են և զխուռն վարչամակը առանձին դրուած է ծալուած՝ հաւատաց Յիսուսի յարութեանը :

Իսկ Պետրոս, առանց բան մը ըսելու, զարմանալով գնաց :

Ծ. Իւզարեր կնիկներ հասան աշակերտներուն քով և պատմեցին աշակերտներուն Տիրոջ փառաւոր յարութեան աւետիսը . իսկ անոնք անոնց խօսքերը շաղփաղփութիւն սեպեցին ու չէին հաւատար :

Թ. Իրիկուան կողմ ուշ ատեն Եմմաուսէն դարձին երկու աշակերտներ ալ եկան անոնց քով և պատմեցին Յիսուսի իրենց հետ տեսնուիլը :

Դռները ամուր գոցեր էին աշակերտները՝ հրէաներէ վախնալով և այդ խօսակցութեան բռնուած էին երբ Յիսուս ինքը ներս մտաւ :

Թ. Յիսուս ըսաւ . « Խաղաղութիւն ձեզի » . Աշակերտները վախցան և կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն — Յիսուս ըսաւ . « Ինչու խռոված էք և ինչո՞ւ ձեր միտքերէն բաներ կ'անցնէք, տեսէ՛ք ձեռքերս ու ոտքերս ՈՐ ԵՍ ԻՆՔՍ ԵՄ, շօշափեցէ՛ք զիս ու տեսէ՛ք վասնզի ոգին մարմին ու ոսկոր չունի



մինչդեռ կը տեսնէք որ ետունիմ »: Աս ըսելով ձեռքերն ու ոտքերը ցուցուց անոնց :

( Հայոց եկեղեցին կը տօնէ ամէն տարի Յիսուսի յարութեան տօնը , զոր Զատիկ կ'անուանէ : Հինգ տաղաւարներու մէջ ամէնէն հանդիսաւորն է Զատիկի տօնը : Օրուան շարականն է « Այսօր յարեաւ » ) :



### Գ Լ Ո Ւ Խ Ծ Բ .

Յիսուս քառասուն օրեր կը կենայ երկրի վրայ  
եւ ապա երկինք կը համբառնայ

1. Յիսուս շարունակեց իր խօսքը. « Ասոնք են այն խօսքերը , որ ձեզի խօսեցայ՝ երբ որ դեռ ձեր հետն էի , թէ պէտք է կատարուի ան ամէնը որ Մովսէսին , մարգարէներուն և սաղմոսին մէջ գրուած է ինձի համար » :

2. Յիսուս բացաւ անոնց միտքը որպէս զի Ս. Դիրքերը հասկնան և ըսաւ անոնց . « Պէտք է որ ես չարչարուէի , երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնէի՝ ինչպէս որ գրուած է , և իմ անունովս ապաշխարութիւն և մեղքի թողութիւն քարոզուի բոլոր ազգերուն , Երուսաղէմէն սկսած » :

3. Յիսուս ըսաւ . « Դուք էք այս բաներուն վկաները . ու ահա ես իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը

ղրկեմ . բայց դուք Երուսաղէմ քաղաքին մէջ նստեցէ՛ք , մինչև որ վերէն զօրութիւն առնէք » :

4. « Ինչպէս որ Հայրը զիս զրկեց , ես ալ ձեզ կը զրկեմ » : Աս խօսքէն վերջը փչեց անոնց վրայ ու ըսաւ . « Առէ՛ք Սուրբ Հոգին . Որո՛նց որ մեղքերը թողուք , թողուած ըլլայ և որո՛նցը որ կապէ՛ք՝ կապուած ըլլայ » :

5. Տասնը մէկ առաքեալները քանի մը օրեր ետքը գացին Գալիլիա : Անգամ մը երբ անոնցմէ մէկ քանիները Տիբերական ծովին մէջ ձուկ բռնելու զրաղած էին , Յիսուս երևցաւ անոնց և նշանաւոր խօսակցութիւն մը ունեցաւ Պետրոսին և Յովհաննէսին հետ :

6. Այդ տեղը Պետրոսին երեք անգամ հարցուց թէ « Զիս կը սիրե՞ս ատոնցմէ աւելի . » Պետրոս արտակցաւ Տիրոջ երեք անգամ հարցնելուն և վերջին անգամուն պատասխանեց . « Տէր , Դուն ամէն բան զիտես ( Ամենագէտ Աստուծոյ զօրութեանը առաջին վկան էր՝ մարդերուն անկեղծագոյնը եղող Պետրոս ) և զիտես որ զքեզ կը սիրեմ . Յիսուս ըսաւ երրորդ անգամ « Արածէ՛ իմ ոչխարներս » :

7. Ուրիշ անգամ մը բոլոր աշակերտները հաւաքուած էին Յիսուսի ժամադիր եղած լեռանը վրայ ու տեսան զանիկայ :

8. Յիսուս մօտենալով անոնց ըսաւ . « Ամէն իշխանութիւն տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ , ուրեմն քացէ՛ք , բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք . մկրտեցէ՛ք զանոնք Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ » :  
« Սորվեցուցէ՛ք անոնց որ պահեն ինչ որ ես ձեզի



պատուիրեցի և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհի վերջը » :

9. Քառասուն օրեր այսպէս զանազան անգամներ Յիսուս երեւնալով աշակերտներուն՝ հրահանգեց զանոնք . ապա Երուսաղէմի մօտ , Բեթանյայի գեղէն անցնելով հանեց զանոնք Չիթենիներու լեօր և իր ձեռքերը վեր վերցնելով օրհնեց զանոնք :

10. Աշակերտները այդպէս օրհնած միջոցին



Տէր Յիսուս , բաժնուեցաւ անոնցմէ ու ԵՐԿԻՆՔԸ ՀԱՄԲԱՐՁԱԽ , ու ամպ մը ծածկեց զԱնիկա անոնց աչքերէն և մինչ անոնք աչքերնին տնկած դէպի երկինք կը նայէին անոր երթալուն վրայ՝ տեսան երկու Հրեշտակներ ճերմակ զգեստներով , որոնք իրենց քով եկան ու ըսին . « Ո՛վ Գալիլիացիներ , ինչո՞ւ կայներ և դէպի երկինքը կը նայիք . Յիսուսը որ ձեռնէ զատ-

ուեցաւ ու երկինք համբարձաւ՝ ասանկ պիտի գայ ինչպէս որ տեսաք անոր երկինք երթալը » :

11. Ան ատենը անոնք ուրախութեամբ երկըրպագութիւն ըրին Տէր Յիսուսին ու մեծ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ , միաբանութեամբ կ'օրհնէին Աստուած :

( Հայոց եկեղեցին Չատիկէն քառասուն օրեր ետքը կը տօնէ Տէր Յիսուսի երկինք համբառնալու տօնը : Օրուան շարականն է « Որ համբարձաւ »ը : )

### Վերջաբան

1. Յիսուսի կեանքը նկարագրուած է չորս գիրքերու մէջ , որոնք կոչուեցան Աւետարաններ , քանզի մարդկային ազգին աւեսեցին Աստուած մորդիին երկինքէն երկիր խոնհանլը , զամէնքը թշուառութենէ ազատելու համար :

2. Աւետարանները գրուեցան առաջին դարուն մէջ Մատթէոս , Մարկոս , Դուկաս և Յովհաննէս աւետարանիչներէն :

3. Աւետարանիչներէն Մատթէոսն ու Յովհաննէսը 12 առաքեալներէն էին ուստի և իրենց պատմած դէպքերուն ականատես վկաներն են :

Դուկաս և Մարկոս 12 առաքեալներէն չէին , սակայն Մարկոս՝ Պետրոսի հրամանով գրեց իր Աւետարանը , ինչպէս եկեղեցիին պատկանելի վկայութիւնը կ'ըսէ և Դուկաս՝ Պօղոսի հրամանով գրեց Թէօփիլոս



անուն պատուական հաւատացեալի մը խնդրելովը, ուստի այս երկուքն ալ ականջալուր վկաներ էին ան- միջական ականատեսներէ լսած :

4. Բոլոր գիտնական մեկնիչներ ընդունած են անաչառ քննութենէ ետքը թէ՛ չորս աւետարանիչ- ներ իրարմէ անկախ գրեցին այդ գիրքերը :

5. Թէ առաջին երեք աւետարանները վաղուց հրատարակուած էին երբ Յովհաննէս աւելի վերջերը հրատարակեց իր աւետարանը առաջիններուն պակաս թողածները լրացնելով :

6. Թէ աւետարանները գրուեցան միջին յունա- րէն ըսուած լեզուովը այնպէս որ հասկնալի ըլլային ամէնուն. քանզի յունարէնը ան ատեններ համաշխարհ- հական լեզուն էր և երբայցեցիները կը խօսէին զայն . անոր մէջ կար խառնուած երբայցեցեքէն բառեր և ոճեր :

7. Աւետարանները շատ կանուխ թարգմանուե- ցան օտար լեզուներու :

8. Կանխագոյն թարգմանութիւնը եղաւ Ասորե- րէն, որ կոչուեցաւ փեթիտոյ ( Պարզ ) առաջին դա- րուն վախճանին մօտ կամ երկրորդ դարուն սկիզբը : Անոր մօտ ժամանակներու մէջ եղաւ հին իտալե- րէն ըսուած թարգմանութիւնը :

9. դարուն մեջ հրատարակուեցաւ Հատիներէն Վուլկաքան ( հրատարակուած ) :

10. Հայերէն լեզուի թարգմանուեցան աւետա- րանները Մեծ Սահակի և Մեսրոպի և իր անմահա- նուն աշակերտներուն ձեռքով Ե. ըդ դարու մէջ :

10. Ե. Դարէն մինչեւ տպագրութեան գիւտը աւետարանները քիւրաւոր օրինակներ գրուեցան ձե- ոագիր և հայ ժողովուրդի մէջ ցրուեցան՝ խորունկ ազդեցութիւն ընելով Հայ քրիստոնեային ընտանի կալիք ու սարգին, կաց ու նիստին վրայ :

11. Տպագրութեան գիւտէն ասդին, գամ քան զքամ կ'աճի աւետարանին տարածումը :

12. Ուրիշ քրիստոնեայ ազգերու մէջ հսկայ ընկերութիւններ հիմնուած են տասն եւ իններորդ դարու մէջ, որոնք երեք հարիւրէ աւելի լեզուներու թարգմանեցին Աւետարանները և միլիոնաւոր օրի- նակներով կը ցրուեն բոլոր մարդկային ազգին մէջ փրկութեան այդ գիրքերը :

ՎԵՐՋ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ





Յառաջարան	էջ 3
Յովհաննէս Մկրտչի ծնունդին աւետիսը	4
Յիսուսի ծնունդին աւետիսը	6
Յովհաննէս Մկրտչին ծնունդը	7
Յիսուսի ծնունդը	10
Յիսուսի տաճար բերուիլը	13
Մոգներուն երկրպագութիւնը	15
Եգիպտոսէ վերադարձը եւ Նազարէթի մէջ հաստատուիլը	17
Յիսուսի պատանեկութիւնը	19
Յովհաննէս Մկրտչի հրապարակային կեանքը	20
Յիսուսի Մկրտուիլը Յովհաննէսէն	23
Յիսուսի հրապարակային պաշտօնի մէջ մտնելը	24
Յիսուսի առաջին հրաշագործութիւնը	27
Յիսուս առաջին անգամ կ'երթայ Երուսաղէմ Պասեքի տօնին	28
Նիկողիմոսի հետ խօսակցութիւն՝ վերատին ծնունդի մասին	30
Յիսուսի պտոյտը Հրէաստանի մէջ	32
Յիսուսի խօսակցութիւնը Սամարացի կնոջ հետ	33
Յիսուսի զօրժերը Գալիլիայի մէջ	36
Շաբաթի հանգիստի եւ մեղքի թողութեան մասին Յիսուսի բռնած դիրքը	39
Յիսուս կ'ընտրէ 12 առաքեալները	42
Յիսուսի լերան քարոզը ( Ա. մաս )	43
» » » ( Ողորմութիւն )	46
» » » ( Աղօթք )	47
» » » ( Ծումապահութիւն )	48
» » » ( Բ. Մաս )	48
Յիսուս Գալիլիայի մէջ երկրորդ շրջան մը կ'ընէ	51
Յիսուսի ուրիշ առակները	53
Յիսուս Տիբերական ծովին վրայ	55
Յիսուս կ'ողջնցնէ Յայրոս իշխանին աղջիկը եւ կը բժշկէ կին մը	56
Յովհաննէս Մկրտչի մահը	58




Յիսուս հինգ հազար մարդիկ կը կերակրէ	60
Կենաց հացը	62
Յիսուսի պայծառակերպութիւնը	64
Յիսուս նորէն երուսաղէմ կ'երթայ ու կը դառնայ Գալիլիա	67
Յիսուսի վերջին գործերն Գալիլիայի մէջ	69
Յիսուս կը հռչակէ թէ ամէն մարդիկ իրարու եղբայր են	71
Յիսուս ղազարոսը կ'ողջնցնէ մեռելներէն	73
Կայիափայ քահանայապետը եւ Հրէաներու ծերակոյտը	76
Յիսուսի ուրիշ մէկ քանի առակները	78
Յիսուս կ'օրհնէ տղաքները, կը հրաւիրէ յոգնածները	81
Յիսուս յաղթանակով երուսաղէմ կը մտնէ	83
Յաջորդ օրերու դէպքերը	85
Յիսուսի վերջին հրապարակային թարգը	87
Յիսուսի մատնուիլը	89
Յիսուս վերնատան մէջ կը հաստատէ Հաղորդութեան խորհուրդը	91
Յիսուսի վերջին խօսքերը	94
Յիսուսի բարեխօսական աղօթքը	98
Յիսուս Գեթսեմանիի մէջ կ'աղօթէ եւ կը բռնուի	100
Յիսուս կը տարուի Սանհետրիոնին առջեւ	102
Յիսուս Հռովմայեցի կուսակալ Պիղատոսին կը տարուի	105
Յիսուսի խաչելութիւնը	109
Յիսուսի թաղումը	113
Յիսուսի Յարութիւնը	115
Յիսուս քառասուն օրեր կը կենայ երկրի վրայ եւ ապա երկինք կը համբառնայ	118
Վերջաբան	121













«Ազգային գրադարան»



NL0163113



ԳԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒ

ՀՐԾՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1. Ա. Վարժուծիւն Մանկանց	10րդ Տիպ	4
2. Բ. » » »	9րդ »	5
3. Դ. » » »	6րդ »	5
4. Տարրական Քերականութիւն	5րդ »	2
5. Լրացուցիչ Դասընթացք	3րդ »	3
6. Փունջ, աշխարհ. Հաւարածոյ	5րդ »	3
7. Փնջակ, պատկերազարդ	5րդ »	1, 10
8. Երկրորդ փունջ	3րդ »	5
9. Գործն. Ընթացք Շարադրութեան	3րդ »	3
10. Բանալի Շարադրութեան	2րդ »	7
11. Ընտելարան Հայ Լեզուի	6րդ »	2
12. Սկզբունք Համաձայնութ. եւ Շարադասութեան		3
11. Տարր. Ընթ. Կրօնի. Վ. Քհ. Աստանեանի	3րդ »	3
15. Պատկերազարդ Այբբենարան (Նոր ռճով)	5րդ »	20
	<b>100րդ 20 դր2.</b>	
17. Ծաղկարազ հաւարածոյ, միջին շրջան	2րդ »	4
20. Համառօտ Կրօնագիտ. Ա. Հարէլեանի	2 Տիպ	3
22. Նուէր Հայ Մանուկներուն, Ս. Դաւ. Թեանի	2 »	1, 20
26. ԲիհիվԱհն, լրագիր Ազգազր. Բանասիր. Լեզուաբ.		
1893ի տարեկանը		216
1899ի »		108
1900ի »		51
27. Աշխարհագրութիւն Օսմ. Կայսրութեան Դ. Խ.		3
30. Թուար. մեղրական դրութեան		5
31. Առաջնորդ Անզղ. լեզուի, Յ. Վարժապետեան		5
33. Օսմ. Տաղաչափութիւն, Ս. Կուրտիկեան		5
34. ԻՈՐ ԴՊՐՈՅ, 10 պրակը		25
37. Ծաղկարազ Քրիստ. Վարդապետ. Ա. Մանուկեան		4
38. Հանդիսարան Բարոյագիտութեան		5
40. Ուղեցոյց Գ. Վարժութեան		5
41. Իրագիտութիւն համառօտ, մտամարզական		3
44. Ա. Մայրենի Լեզու Դաւ. Թեան		2, 20
47. Բ. Մայրենի Լեզու Դաւ. Թեան		4
48. Ճաշակ Նոր Գրականութեան		7